ԱՇԱՏ ՇԱՀԻՆՅԱՆ

ՏՂԱՆ ԵՎ ՆՐԱ ԲԱՐԻ ԹՇՈՒԿՆԵՐԸ

ԱՌԱՋԻՆ ՍԱՍ

1

Առաջին հարկի պատշգամբի ճաղին նստել էր Փոքրիկը: Տղան օճառե փուչիկներ էր բաց թողնում և ամեն մի փուչիկի հետ ուրախ քրքջում էր, հրճվանքից թափահարում ոտքերը: Արևի շողերից փայլփլող թափանցիկ փուչիկները օրորվելով իջնում էին ասֆալտե մայթին և անձայն պայթում:

Փոքրիկին թվում էր, որ այդ փուչիկները նա բաց է թողնում շատ հեռվից: Թվում էր, որ ինքն այդ պահին օճառաջրով թասը բռնած, նստել է հեռու-հեռու ամպերից մեկի վրա և երկնքից հազարավոր, միլիոնավոր փուչիկներ է բաց թողնում: Մինչդեռ կարճ էր տարածությունը, և կարճ էր կյանքը փուչիկների: Նրանք դողալով ու թրթռալով իջնում էին գետնին և մեկը մյուսի ետևից պայթում:

Բակում, Փոքրիկից քիչ հեռու, կանգնել էր երրորդ հարկի բնակիչը, տարիքն առած մի մարդ ալեհեր, թավ բեղերով: Նա ջրում էր պատշգամբի առջև աճած նորատունկ վազերը, քնքշանքով մաքրում կանաչ, դալար տերևները և ինչ-որ անհասկանալի բառեր շշնջում քթի տակ:

Տղան մի կողմ դրեց օճառաջրով թասը և թռչելով պատշգամբի ճաղի վրայից, մոտեցավ նրան:

- Այդ ո՞ւմ հետ ես խոսում, պապի:

- Հենց այնպես, - ասաց երրորդ հարկի հարևանը: - Ինքս ինձ հետ, սրանց հետ...

- Ի՛, սրանք հո մարդիկ չեն, որ խոսեն, - ասաց Փոքրիկը:

- Խոսում են, տղաս, խոսում են... Եթե շնչում են, ջուր են խմում, մեծանում՝ ուրեմն խոսում են: Այ, երբ շոգ է լինում, ես լսում եմ, թե ոնց են գանգատվում ծարավից: Իսկ երբ ցուրտ է լինում, սառնամանիք, լսում եմ սրսփոցը: Նրանք լաց էլ են լինում, տղաս:

- Լա՞ց են լինում... - զարմացած ծոր տվեց Փոքրիկը:

- Գարնանը, երբ կտրում են խաղողի մատը, կտրած տեղից ջուր է կաթկթում, արցունքի պես զուլալ, զուլալ...

- Իսկ սրա՞նք:

- Սրանք փոքրիկ մատեր էին, երբ բերեցի: Հիմա արդեն, նայիր, մեծացել են, թփակալել, բայց էլի գանգատվում են:

- Ինչի՞ համար:

- Հողը քիչ է, ասում են, ասֆալտը խեղդում է մեզ:

- Քանդենք, - հրճվալից վրա տվեց տղան: - Բահը բերենք ու քանդենք:

- Ձեռքներդ սովորել է քանդելու: Քանդելու համար մի հատ եք, իսկ խնամել, աճեցնել՝ երբեք...

- Չէ, պապի, ասֆալտն եմ ասում քանդենք:

- Չի կարելի, ասֆալտը քանդել չի կարելի:

- Որ քանդենք, հողը կշատանա:

- Էհ, տղաս, ասֆալտը քանդելով հողը չես շատացնի, քար է չորս կողմը: Արմատների հողը պետք է շուտ-շուտ փխրեցնել: Խնամել է պետք: Թե որ խնամեցիր, էս մի թիզ հողում էլ սրանք կաճեն, կզորանան... Էդպես է, տղաս, ինչը որ քաղցր պտուղ է տալիս, անպայման պետք է աճի, զորանա...

Բակով անցնում էր նույն շենքում ապրող երիտասարդ գրողը: Փոքրիկը նրան տեսնելուն պես ուրախ ընդառաջ վազեց:

- Գնո՞ւմ ես:

Երիտասարդը ժպտաց:

- Գնում եմ:
- Ո՞ւր ես գնում:
- Տանում եմ, որ կինո հանեն, - թևատակի թղթապանակը ցույց տալով, ասաց գրողը:
- Իսկակա՞ն:
- Իսկական...
- Ինչ լավ է... - հրճվալից ճչաց տղան և սկսեց ուրախ թռչկոտել:
Երիտասարդ գրողը քնքշանքով խառնեց Փոքրիկի մազերը, հետո ձեռքը օդում թափահարելով, հրաժեշտ տվեց ու գնաց:

2

Ցանկապատով շրջափակված առանձնատունը ծածկված էր մրգատու ծառերով: Ծառերն ասես տնքում էին բարձր պատերի ներսում: Բայց հսկա թթենու ճյուղերից մեկը դուրս էր եկել փշալարերով, ապակու սուր-սուր կտորներով զրահավորված ցանկապատի վրայից ու կախվել հարևան շենքի բակի վրա: Առանձնատան տերը կարծես տանը չէր, իսկ ցանկապատի ետևում քնած էր գամփռը: Մեծ բակի երեխաները կախվել էին այդ ճյուղից ու թութ էին ուտում:
- Ո՛ւֆ, ինչ թութ է, - ասաց Մարկոսը շրթունքները ծպացնելով:
- Էսպիսի համեղ թութ աշխարհում չկա, - ավելացրեց Շեկոն:
Իսկ նրանց մոտ կանգնած Փոքրիկը, որը ոչ մի կերպ չէր կարողանում ձեռքը հասցնել ճյուղին, սկսեց գետնին կաթող թթերն ուտել:
- Ինչ քաղցր է, - ասաց նա, - հայրիկիս գնած թթից էլ քաղցր է:
- Շուկայի թութն ինչ է որ... - ասաց Մարկոսը:
- Դուրս թափելու բան, - ավելացրեց Շեկոն:
Երեխաները գոհ էին, որ աշխարհում կար թթի ծառ, ցանկապատի վրայից դեպի մեծ բակը թեքված փոքրիկ ճյուղ և ճյուղի վրա քաղցր ու հրաշալի թթեր:
Ցանկապատի ետևում մրափած գամփռը հանկարծ վեր թռավ ու կատաղի հաչեց: Շան հաչոցի վրա դուրս թռավ առանձնատան տերը:
Մարկոսն ու Շեկոն բաց թողին թթենու ճյուղը, փախան: Փոքրիկն էլ վազեց: Նրան թվաց, թե կատաղած գամփռը կրնկակոխ սլանում է իր ետևից: Փոքրիկը սայթաքեց, հետո վեր կացավ ու ծունկը բռնած հասավ իրենց շքամուտքը:
Նա լեղապատառ տուն գցեց իրեն, թաքնվեց մահճակալի տակ ու կուչ գալով մի անկյունում, շունչը պահեց: Նրան թվում էր; թե ուր որ է կթակեն իրենց դուռը:
- Դանակ-մկրա՛տ սրեմ, դանակ-մկրա՛տ, - լսվեց դրսից մեկի ծոր տվող ձայնը:
Փոքրիկը դանդաղ դուրս սողաց մահճակալի տակից, մոտեցավ պատուհանին:
Բակում, առանձնատունը շրջափակող ցանկապատի մոտ, որտեղ իրենք քիչ առաջ թութ էին ուտում, կանգնած էր մի ծերունի: Նա ոտքով պտտեցնում էր առջևը դրված փայտե մեքենայի անիվը, ինչ-որ պողպատյա թիթեղ սեղմելով սրաքարին: Մեքենայի դիմաց կանգնել էին Մարկոսն ու Շեկոն: Նրանք ձեռքերը պահել էին պտտվող սրաքարի առաջ, որից խուրձերով կայծեր էին թռչում: Տղաները հրմշտում էին իրար, ամեն մեկն աշխատում էր իր ձեռքի ափը մի քիչ ավելի երկար պահել փայլփլուն կայծերի դեմ:
Այդ տեսնելով Փոքրիկը դուրս թռավ տնից: Շքամուտքը լցվեց նրա անհամբեր ոտնաձայնով:
- Ես էլ փորձե՞մ, - ասաց նա, մոտենալով տղաներին:
- Էն կողմ քաշվիր, - ասաց Մարկոսը:
- Քո խելքի բանը չի, հեռու գնա, - վրա բերեց Շեկոն:
- Ինչ կլինի, Մարկոս, ես մենակ մի անգամ, հա՞, - ասաց Փոքրիկը գլուխը տղաների արանքից ներս խցկելով:

Մարկոսը շուռ եկավ ու մատով թրխկացրեց նրա քթին: Փոքրիկը վեր քաշեց քիթը և վիրավորանքը շրթունքների տակ սեղմած, կանգնեց մի կողմ:
Ծերունին կանգնեցրեց անիվը:
- Բա չե՞ք ամաչում: Ապա մի հեռու քաշվեք, շուտ, - վրդովված ասաց նա:
- Պա՛հ, - ծոր տվեց Մարկոսը:
- Կարծես մեծ բան է, էլի, - ավելացրեց Շեկոն:
Տղաները հեռացան անհոգ սուլելով:
- Մոտ արի, որդի, - ասաց Ծերունին:
Փոքրիկը մոտեցավ:
Ծերունին նորից պտտեցրեց անիվը՝ փայտի վրա ամրացված պողպատե թիթեղը սեղմելով արագ գլորվող սրաքարին: Տղան ձեռքի ափը պահեց կայծերի դեմ, որոնք իրար ետևից թռչում, ասես հալվում էին նրա ափի մեջ: Փոքրիկը դրանից տարօրինակ մի խուտուտ զգաց ու սկսեց ծիծաղել:
- Քանի՞ տարեկան ես, - բեղի տակ ժպտալով, հարցրեց Ծերունին:
- Որ հարյուր անգամ քնեմ ու վեր կենամ յոթ տարեկան կդառնամ, - արագ վրա բերեց Փոքրիկը և հետո ավելացրեց. - բա դու քանի՞ տարեկան ես...
- Է՛հ, որդի, ես որ յոթ հարյուր անգամ էլ քնեմ ու վեր կենամ, էլ յոթ տարեկան չեմ դառնա:
- Ես էլ պտտեցնե՞մ, - ասաց տղան հայացքը չկտրելով անիվից:
- Պտտեցրու, որդի, պտտեցրու...
Փոքրիկը շտապով մոտեցավ, ոտքը դրեց ճոճվող փայտե հարթակի վրա՝ Ծերունու ոտքի կողքին:
- Սա ինչի՞ համար ես սրում, - հարցրեց տղան:
- Չեմ սրում, սրանով սրաքարն եմ ուղղում:
- Ես էլ ուղղե՞մ:
- Չես կարող, ձեռքիդ կխփես:
- Չեմ խփի, թող էլի, ինչ կլինի...
- Դե լավ, - ասաց Ծերունին, փայտի վրա ամրացված պողպատե թիթեղը տալով տղային: - Մենակ թե ամուր բռնիր: Այ էսպես... Պինդ սեղմիր...
Սրաքարը պտտվում էր, կայծերը թռչում էին, իսկ Փոքրիկը լողում էր երանության մեջ:
- Դանակ-մկրա՛տ սրեմ, դանակ-մկրա՛տ... - կանչեց Ծերունին, հայացքը շենքի պատշգամբներին ուղղելով:
- Որ մեծանամ, դանակ-մկրատ սրող կդառնա՛մ, - սրաքարը պտտեցնելով ոգևորված բղավում էր Փոքրիկը:
- Պետք չի, - ասաց Ծերունին: - Դանակ-մկրատ սրող պետք չի:
- Բա կայծե՞ր...
- Կայծեր միշտ էլ կլինեն, կարևորն էստեղ է, - ասաց նա ձեռքը կրծքին տանելով: - Էստեղ որ կրակ լինի, կայծեր միշտ էլ կլինեն... Չէ, դանակ-մկրատ սրող պետք չի: Դու ավելի խելոք մարդ կդառնաս: Դու շատ մեծ մարդ կդառնաս: Իմ բանն ուրիշ էր... - հառաչեց Ծերունին և հայացքը նորից պտտեցրեց բակում, երգեցիկ ձայնով կանչեց. - Դանակ մկրա՛տ սրեմ, դանակ-մկրա՛տ...
- Սրի, հա՞, - ասաց Փոքրիկը:
- Որ բերեն, կսրեմ:
- Բա ինչի՞ չեն բերում:
- Էհ, որդի, հիմա ամեն մարդ իր դանակը իր չարխի վրա է սրում:

Նա ձեռքը մեկնեց գլխավերևը կախված ճյուղին ու հասած թթերից պոկելով, բերանը տարավ:
- Քաղցր է, չէ՞, - հարցրեց տղան:
- էն էլ ոնց, - ժպտաց Ծերունին: - Արի դու էլ կեր:
- Ես գետնից եմ ուտում:
- Ծառի վրայինը ուրիշ է:
- Ախր ձեռքս չի հասնում, է:
- Որ պարզես, կհասնի, - ասաց Ծերունին և գրկելով տղային, բարձրացրեց վեր, ցանկապատից էլ բարձր:
Փոքրիկը դեռ նոր էր մի քանի թութ դրել բերանը, երբ ծառի տակ պառկած շունը վեր թռավ ու սկսեց հաչել: Բակի խորքից լսվեց նաև տանտիրոջ ձայնը:
- Իջեցրու, իջեցրու, - սարսափած ասաց տղան:
Ծերունին նրան ցած իջեցրեց:
- Ի՞նչ պատահեց, որդի:
- Փախիր, պապի, գալիս է, - տագնապով ասաց Փոքրիկը՝ քաշելով Ծերունու քաթանե գոգնոցից:
Ցանկապատի երկաթյա դուռը ճռռաց: Դուրս եկավ առանձնատան տերը:
- Լսեք, վերջ պիտի լինի, թե՞ չէ, - բարկացած բղավեց նա:
- Ի՞նչ է եղել, - զարմացած հարցրեց Ծերունին:
- Ինչ պիտի լինի: Գնացող-եկող էս անտեր ճյուղից է կախ ընկնում: Չի էլ ջարդվում՝ հոգիներս ազատվի:
- Ինչի՞ ջարդվի, երեխեք են, թող ուտեն:
- Պատերն են քանդում:
- Ծառի ճյուղը պատերի մեջ չես պահի, դուրս է եկել, թող ուտեն:
- Շանն են հաչեցնում, գլուխներս գնաց:
- Ոչինչ, շուն է, կհաչի-կհաչի, կլռի...
- Չի լռի, - բղավեց տանտերը: - Գործիքդ վերցրու, գնա էստեղից: Ինչ ես մի գլուխ դռանս մոտ՝ «դանակ-մկրատ սրեմ»: Գլուխներս տարար, գնա ուրիշների դռների մոտ կանչիր, - ասաց նա ու երկաթյա դուռը ետևից շրխկացնելով, ներս մտավ:
- Բա, ախպերս, էսպես էլ է լինում, - խոր հոգոց հանելով ասաց Ծերունին, անիվավոր մեքենան ուսովը գցեց ու գնաց դիմացի քառահարկ շենքը, կանչելով. - դանակ-մկրատ սրեմ, դանակ- մկրա՛տ...

3

- Ինչի՞ ես կտրում, այ մարդ, - երրորդ հարկից ձայն տվեց խաղողի վազեր աճեցնող հարևանը:
Այդ խոսքերը լսելով, Փոքրիկը դուրս թռավ տնից:
Բակում, ցանկապատին հենված փայտե սանդուղքին կանգնել էր առանձնատան տերը՝ սղոցը ձեռքին: Ցանկապատից դուրս եկած թթենու ճյուղը ցնցվում էր նրա սղոցի տակ:
Փոքրիկը սարսափած առաջ նետվեց:
- Ինչի՞ համար, քեռի, ինչի՞ համար...
- Կկտրեմ, կանաչ-կանաչ կկտրեմ, որ համ ձեր հոգին ազատվի, համ էլ իմը...
Եվ ահա մի խուլ ճթթոց լսվեց, և թթենու ճյուղը խշշոցով ընկավ ցանկապատի վրայից:
- Կտրե՛ց, կտրե՛ց, - ճչաց տղան:
Այլայլված պատշգամբ ելավ նրա հայրը:
- Ի՞նչ պատահեց:

- Կտրեց, պապա...
- Ո՞վ կտրեց: Ի՞նչ կտրեց...
- Թթենու ճյուղը, տես:
- Ես էլ ասեմ ինչ է եղել:
- Աշխարհի ամենաքաղցր թթի ճյուղն էր, - լացակումած ասաց Փոքրիկը՝ հիշելով Շեկոյի խոսքերը:
- Ոչինչ, տղաս, նորից կաճի, - ժպտալով ասաց հայրը:
- Որ կտրում են բա չի՞ ցավում:
- Ցավում է, ինչ էլ որ կտրում են, ցավում է:
- Բա ծառը լաց չի լինի՞...
Հայրը ժպտաց, ժպտաց ու գնաց իր գործին: Իսկ տղան դեռ երկար կանգնել էր բակում, հայացքը սևեռած թթենու կտրված մասին: Հետո շուռ եկավ և մեծ-մեծ կոշիկները քարշ տալով գնաց տուն:
Ներս մտնելուն պես նա բարձրացավ աթոռին և գրպանի ամբողջ պարունակությունը շուռ տվեց սեղանին: Հայելու կտոր, մի քանի պղնձե դրամ, թիթեղյա ծռմռված սուլիչ և ուրիշ այլ իրեր: Նա այդ բոլորից առանձնացրեց մանր դրամներն ու սկսեց հաշվել.
- Մի կոպեկ... էլի մի կոպեկ, երկու կոպեկ... Հետո էլի մի կոպեկ, կանի երեք կոպեկ:
Թեպետ ընդամենը վեց տարեկան էր, բայց արդեն ոչ միայն կարողանում էր հաշվել մինչև երեսունը, այլև գիտեր, որ երեք կոպեկով կարելի է մի ամբողջ բաժակ գազով ջուր խմել՝ նարնջի կամ բալի հյութով քաղցրացրած: Նա հասկանում էր նույնիսկ, որ այդ երեք կոպեկով գնած մի բաժակ քաղցր ջուրը կարելի է բաժանել երեք մասի և երեքով միասին վայելել այդ հրաշալի բավականությունը:
Տղան, մանր դրամը բռի մեջ սեղմած, ցած իջավ աթոռից, սեղանին շաղ տված իր հարստությունը նորից գրպանները լցրեց, ոտքերին գցեց դռան տակ դրված հոր մեծ-մեծ կոշիկները, բաց արեց դուռը, և շքամուտքը լցվեց նրա ուրախ ոտնաձայնով:
Դրսում տաք էր, արև...
Դրսում, արջի քոթոթների պես իրար գրկած, ավազաթմբի վրա թավալվում էին Մարկոսն ու Շեկոն: Երբ տղաները մի լավ գզվեցին, Մարկոսը ոտքի կանգնեց և շորերը թափ տալով, ասաց.
- Արի գնանք թութ ուտենք...
- Գնանք, - համաձայնեց Շեկոն:
Նրանք ուրախ շվշվացնելով գնացին բակի ծայրը: Մոտենալով առանձնատան ցանկապատին, տղաները կանգ առան: Թթենու ճյուղը չկար...
- Կտրել են, - վեր նայելով ասաց Մարկոսը:
- Պահ, կարծես կարոտ էինք իրենց թթին, - ավելացրեց Շեկոն: .
- Իսկի էլ քաղցր չէր, չէ՞, Շեկո:
- Ինչ քաղցր, էդպիսի անհամ թութ ես դեռ կյանքումս չէի կերել:
- Ի՞նչ անենք, - ասաց Մարկոսը՝ գլուխը քորելով: - Արի շանը հաչեցնենք, հա՞:
- Գործ չունես, գնանք...
- Էհե՛յ, Մարկոս... էհե՛յ, Շեկո... - հեռվից ձայն տվեց Փոքրիկը և կոշիկները քստքստացնելով, վազեց առաջ:
Պատասխանի փոխարեն Մարկոսը հողակոշտով շրխկացրեց Փոքրիկի քթին: Ցավից ջրակալեցին նրա աչքերը: Փոքրիկը կանգ առավ, բռունցքներով շփեց քիթն ու աչքերը, բայց այդ հարվածն իր նկատմամբ ուշադրության նշան համարելով, ժպտաց միամիտ ու պայծառ մի ժպիտով:

- Տղաներ, փող... - ուրախ բացականչեց նա: Մարկոսն ու Շեկոն միանգամից զգաստացան:
- Տեսեք...
- Երեք կոպե՞կ, իհ... - ձեռքն անտարբերությամբ թափ տվեց Մարկոսը, որը երեք թզաչափ բարձր էր Փոքրիկից և նրանից յոթ տարի շուտ էր հայտնվել աշխարհում:
- Սրանով մի բաժակ գազով ջուր կխմենք, Մարկոս, - աղերսագին ասաց Փոքրիկն ու ավելացրեց, - բալի հյութով...
- Բալի հյութո՞վ, - մեջ ընկավ Շեկոն, որը թեպետ Մարկոսի տարիքին էր և ընդամենը մի քթաչափ էր ցածր նրանից, բայց Փոքրիկի պես անտարբեր չէր կարողանում մնալ ամեն տեսակ քաղցր բանի նկատմամբ:
- Ըհը, - գլխով հաստատեց Փոքրիկը: - Գնանք, երեքիս էլ կհասնի:
- Մեր փողոցում գազով ջրեր չկան, - ասաց Մարկոսը:
- Խանութից կառնենք, - ասաց Փոքրիկը:
- Մեր խանութում շշով են վաճառում:
- Այգու մոտ կա, - արագ վրա տվեց Շեկոն ու ընկերոջը գլխով գնալու նշան արեց:
- Լավ, գնանք, - համաձայնեց Մարկոսը:
Տղաները, իրենց մեջտեղն առած Փոքրիկին, ձեռքերը նրա ուսերին դրած, անցան բակով: Փոքրիկը հպարտությամբ շուրջն էր նայում: Ուզում էր՝ բոլորը տեսնեն, որ ինքը մենակ չէ: Ուզում էր, որ ցանկապատի ներսում շնթռած գամփռը դուրս պրծներ ու կատաղած հաչեր: Թող նա էլ տեսնի, որ ինքը մենակ չէ: Ինչքան ուզում է թող գռմռա, միևնույն է, էլ չի վախեցնի իրեն:
Դուրս եկան փողոց:
Նա ուզում էր, որ այգին, որի մոտ գազով ջուր են վաճառում, ոչ թե իրենց փողոցի անկյունում լիներ, այլ շատ հեռու, որպեսզի իր ուսերին երկար ժամանակ զգար տղաների ձեռքերը:
Եվ ահա նա անցնում է փողոցով, տղաների ձեռքերը ուսերին, սիրտը լցված ամենակատարյալ երջանկությամբ:
Նրանք մոտեցան այգու մուտքի մոտ կանգնած գազով ջրերի վաճառասայլակին: Սայլակի կենտրոնում իրենց ամբողջ շքեղությամբ փայլում էին կարմիր ու դեղին հյութերով լցված ապակյա երկար սրվակները:
- Վերցրու, Մարկոս, - ասաց Փոքրիկը մանր դրամը պարզելով նրան:
- Կարմիր գույնից ես ուզո՞ւմ, թե՞ դեղինից, - մեջ ընկավ Շեկոն:
- Երկուսից էլ ուզում եմ, - ասաց Փոքրիկը՝ աչքը չհեռացնելով գունավոր, երկար սրվակներից:
- Երեք կոպեկով երկուսից չեն տա, - ասաց Մարկոսը: - Էլ ուրիշ կոպեկ չունե՞ս:
- Չկա, Մարկոս:
- Իսկ դու մի լավ նայիր, - ավելացրեց Շեկոն:
- Չկա, ըհը, - ասաց Փոքրիկը՝ ձեռքերը թփթփացնելով գրպաններին:
- Դե լավ, թող մի գույնից տա, - ասաց Մարկոսը ու մանր դրամը մեկնելով վաճառողին՝ ավելացրեց. - մի բաժակ գազով ջուր, նարնջի հյութով...
Փոքրիկը բարձրացավ ոտքի թաթերին տեսնելու, թե գազով ջուրը ոնց է խշշալով լցվելու բաժակի մեջ: Բայց վաճառասայլակը բարձր էր, նա միայն դեմքին թռած ջրի կաթիլներից զգաց այդ բավականությունն ու քրքջաց:
Մարկոսը քաղցր ջրով լի բաժակը մոտեցրեց շրթունքներին: Երևի բաժակի գունավոր պարունակությունն ամբողջովին անհետանար նրա կոկորդում, եթե Շեկոն չխլեր բաժակը Մարկոսի ձեռքից՝
- Բա ի՞նձ...

Փոքրիկը, որ մինչ այդ ակնապիշ հետևում էր Մարկոսին, հիմա էլ սկսեց նայել, թե Շեկոն ինչպես էր փնչալով ու ֆսֆսալով կուլ տալիս նարնջաջուրը: Երբ բաժակը համարյա դատարկվեց, նոր միայն Փոքրիկին բաժին հասավ: Նա հազիվ կարողացավ շրթունքներն թրջել, բայց ժպտաց:
- Ինչ քաղցր էր:
- Շա՛տ, - ծոր տվեց Մարկոսը:
- Որ փող լիներ, էլի կխմեինք, - ավելացրեց Շեկոն: Նրանք հեռացան վաճառասայլակից: Փոքրիկը փորձեց այս անգամ էլ իր ձեռքերը դնել տղաների ուսերին, բայց չհասան: Փոխարենը նա ամուր գրկեց Մարկոսի ու Շեկոյի գոտկատեղերից ու այդպես քայլեց նրանց հետ: Նրանք դեռ մի քանի քայլ չէին արել, երբ Մարկոսը, չգիտես ինչու, կանգնեց, նայեց Շեկոյին ու դառնալով Փոքրիկին, ասաց.
- Դե լավ, դու տուն գնա:
- Բա դո՞ւք:
- Ես տեղ պիտի գնամ, - ասաց Մարկոսը:
- Ես էլ... - ավելացրեց Շեկոն:
- Ինչ կլինի, այգի գնանք, հա՞, - ասաց Փոքրիկը:
- Գիտես, - կմկմաց Մարկոսը: - Ես շատ կարևոր տեղ եմ գնալու:
- Իսկ ես ավելի կարևոր տեղ պիտի գնամ, - ավելացրեց Շեկոն:
- Դու հիմա տուն գնա, իսկ այգի մենք մի ուրիշ անգամ, լա՞վ:
- Լավ, - ընկճված համաձայնեց Փոքրիկը: Մարկոսն ու Շեկոն արագ հեռացան:
Այգում թնդում էր նվագախումբը: Բարալիկ մի ձայն ծղրտոցով երգում էր. «Թող լինի միշտ արևը...»
Փոքրիկը գրպանից հանեց թիթեղյա ծռմռված սուլիչը, մի քանի անգամ ֆշտացրեց, բայց սուլոց դուրս չեկավ: Նա ձեռքերը գրպանը դրեց և քարշ տալով մեծ-մեծ կոշիկները, մայթի եզրով քայլեց փողոցն ի վեր:
Տղան չնկատեց, թե ինչպես երկաթե բարձր ցանկապատից այն կողմ, այգու ծառուղիով դեպի ճոճանակների հրապարակն էին վազում Մարկոսն ու Շեկոն:

4

Բազմահարկ շենքերով շրջափակված հսկա բակը ողողվել էր ամառային պայծառ արևով:
իրենց պատշգամբի ճաղին նստել էր Փոքրիկը և ջարդված հայելու կտորով շողք էր գցում դիմացի շենքի պատշգամբներին: Ահա նա նկատեց երկրորդ հարկի պատշգամբում կանգնած իր հասակակից աղջկան: Ժպտաց... ժպտաց և աղջիկը: Տղան հայելու շողքը ուղղեց նրան:
- Դե բռնիր, կարո՞ղ ես... - ձայն տվեց նա:
- Որ արագ չփախցնես, կկարողանամ, - պատասխանեց Աղջիկը:
- Ես կամաց կփախցնեմ: Դե բռնիր...
- Ըհը... Ըհը, - ճչում էր աղջիկը և ձեռքերը տպտպացնելով այս ու այն կողմ ցատկոտող հայելու շողքին, աղմուկով վազվզում էր պատշգամբի մի ծայրից մյուսը:
Բայց «խաղը» ընդհատվեց:
Փոքրիկը, հայելու կտորը գրպանը դնելով, շտապ իջավ ճաղի վրայից ու վազեց բակ:
Բակի խորքից գալիս էր հայրը ինչ-որ արկղ թևատակին:
- Այդ ի՞նչ է, հայրիկ...
- Ծանրոց, մայրիկն է ուղարկել:
- Բա մայրիկը ե՞րբ է գալու, - ծանրոցը հոր ձեռքից վերցնելով, հարցրեց տղան:
- Դու շատ լավ գիտես, որ երեք ամսով են ուղարկել: Գործը կվերջացնի, կգա...

- Ինքնաթիռո՞վ:
- Ինքնաթիռով:
- Ես էլ եմ ուզում... - թնկթնկաց տղան:
- Կնստես, մի օր էլ դու կնստես...
Նրանք տուն մտան: Փոքրիկը ծանրոցը դրեց սեղանին, բարձրացավ աթոռին ու անհամբեր սպասեց:
Հայրն աքցանով բաց արեց ծանրոցի կափարիչը:
- Մի տես, մայրիկը քեզ ինչ է ուղարկել, - ասաց նա՝ թիթեղյա բարալիկ մի տուփ մեկնելով տղային:
Փոքրիկը հրճվալից ճչաց ու սկսեց աթոռին կանգնած թռչկոտել:
- Ի՜նչ սիրուն տուփ է, վա՜յ, ինչքան լավն է...
Եվ իրոք... Տուփը նկարազարդված էր իրար ետևից շարված ճերմակամորուք երեք պստլիկ ծերուկներով՝ ճաղատ ու ժպտացող: Տղան անհամբեր բաց արեց կափարիչն ու միջի նախշավոր շոկոլադներից մեկը վերցնելով, բերանը տարավ:
- Դու էլ վերցրու, հայրիկ, շատ համեղ են, - ասաց նա՝ բացված տուփը հորը մեկնելով:
Փոքրիկն այնքան էր տարվել իր տուփով, որ ուշադրություն չդարձրեց իր համար ուղարկված բրդյա գեղեցիկ զգեստին, ոսկեգույն կապիչներով կոշիկներին և բոլոր այն իրերին, որ հայրը հանել էր ծանրոցից ու դրել սեղանին:
- Այս ի՞նչ պստլիկ ծերուկներ են:
Հայրը, որ արդեն նստել էր փոքրիկ նկարակալի առջև ու ձեռքն առել վրձինը, հայացքը կտավից չկտրելով ասաց.
- Դրանք այն թզուկներն են, տղաս, որոնք շատ են սիրում երեխաներին ու ամեն բանով օգնության են հասնում նրանց:
- Օգնությա՜ն են հասնում, - զարմացած ծոր տվեց տղան և իսկույն տեղ գրավելով հոր ոտքերի մոտ, թախանձագին ասաց, - պատմիր, հայրիկ, պատմիր թզուկների մասին, հա՞:
- Հետո, մի ուրիշ անգամ:
- Հիմա պատմիր: Լավ էլի, ինչ կլինի...
- Ախր, ինչ պատմեմ, է... - մտազբաղ ասաց հայրը և մի փոքր մտածելուց հետո տղայի համար հորինեց տարօրինակ մի հեքիաթ երեք թզուկների մասին: - Աշխարհում ապրում էին մի փոքր քույր ու մի փոքր եղբայր: Մի անգամ այս քույրն ու եղբայրը գնում են անտառ՝ սունկ հավաքելու: Եվ երբ ուզում են տուն վերադառնալ, նկատում են, որ կորցրել են ճանապարհը: Իսկ երբ մութը վրա է տալիս, նրանք կծկվում են մի հաստաբուն ծառի փչակում ու սկսում են լաց լինել: Այնքան են լաց լինում, որ նրանց արցունքներից ծառի բնի մոտ մի մեծ սունկ է բուսնում և սունկի տակ՝ երեք փոքրիկ թզուկ՝ ճաղատ ու մորուքավոր: Եվ ահա, այս բարի թզուկները, որ երեխաների արցունքներից էին ծնվել, օգնում են անտառում մոլորված եղբորն ու քրոջը և տուն հասցնում նրանց...
Պատմում էր հայրը կտավի վրա ներկեր դնելով, իսկ Փոքրիկն ամբողջովին կլանված լսում էր: Նա լսում էր հրաշալի մի հեքիաթ, գուցեև ամենալավագույնը իր լսած բոլոր հեքիաթներից:
- Եվ հիմա էլ ասում են, - շարունակեց հայրը հայացքը չկտրելով կտավից, - որ երբ հողագնդի որևէ անկյունում երեխա է լալիս. նրանք իսկույն օգնության են հասնում նրան: Չէ՞ որ այդ բարի թզուկները երեխաների արցունքներից են ծնվել և շատ լավ են հասկանում, թե որքան դառն են նրանց արցունքները...
- Իսկ որտե՞ղ են նրանք ապրում:
- Հեքիաթներում, տղաս, միայն հեքիաթներում:

- Բա ինչո՞ւ միայն հեքիաթներում:
- Որովհետև... - կմկմաց հայրը, - հարմար է, որ նրանք ապրեն հեքիաթներում:
- Իսկի էլ հարմար չի, - համառեց Փոքրիկը: - Ես չեմ ուզում... Չեմ ուզում, որ նրանք հեքիաթներում ապրեն: Ես ուզում եմ՝ մեր տանն ապրեն...
Հայրը ժպտաց ու շարունակեց նկարել:
Իսկ տղան, որ ոչ մի կերպ չէր կարողանում իրարից տարբերել տուփի վրա նկարված թզուկներին, վերցրեց հոր վրձիններից մեկը և նրանց ճերմակ մորուքները ներկեց տարբեր գույներով: Մեկի մորուքը ցորենի հասած արտերի, արևի շողերի գույնով ներկեց ու այդ թզուկին անվանեց Դեղնամորուք: Երկրորդի մորուքը ներկեց նորածիլ խոտերի, թավշե դաշտերի և հավիտյան դալար եղևնու գույնով ու անվանեց Կանաչամորուք: Բայց ահա, երրորդ թզուկի մորուքը կապույտ գույնով ներկելուց հետո, վերցրեց վրձինն ու կարմիր գույնով ներկեց նրա քիթը: Ինչպիսի խայտառակություն, կարմիր քիթ... Բոլորն անպայման կմտածեն, որ սա հարբեցողի մեկն է: Ավելի լավ է հարբուխով հիվանդ լինել, քան հարբեցող: Բայց դե ինչ կարող ես անել, արդեն ներկել էր... Դե լավ, որոշեց տղան, թող սա էլ այսպես կարմիր քթով մնա: Եվ նա հենց այդպես էլ անվանեց նրան՝ Կարմրաքիթ...
- Ինչո՞ւ տուփը ներկոտեցիր, - հանդիմանեց հայրը:
- Ախր երեքն էլ իրար նման էին: Երեքի մորուքներն էլ սպիտակ, սպիտակ... - արդարացավ տղան և ապա ոգևորված ավելացրեց, - սրանից հետո ես տուփը իմ բարձի տակ կպահեմ ու թզուկները միշտ մեր տանը կլինեն:
Հայրը ծիծաղեց:
Բայց, արի տես, որ այդ օրվանից սկսած թզուկներն ապրեցին Փոքրիկենց տանը, նրա բարձի տակ: Ամեն անգամ քնելիս թե արթնանալիս նա հանում էր նվիրական տուփը, որի մեջ տեղավորել էր մի ամբողջ աշխարհ, նայում էր հիացած ու նորից դնում բարձի տակ:
Բայց, ահա մի օր էլ...

5

Բակում հեծանիվ էին քշում Մարկոսն ու Շեկոն: Փոքրիկը շտապ իջավ պատուհանի գոգից, բարձի տակից հանեց թզուկներով նկարազարդված տուփը և գնաց բակ:
- Էհե՛յ, Մարկոս... Էհե՛յ, Շեկո, - ձայն տվեց նա ընդառաջ վազելով տղաներին: - Տեսեք...
- Էդ ի՞նչ է, - հարցրեց Մարկոսը հեծանիվից ցած թռչելով:
- Սրանք բարի թզուկներն են, Մարկոս: Սրանք շատ են սիրում երեխաներին:
- Մեջն ի՞նչ կա, մեջը, - հարցրեց Շեկոն՝ հայացքը չկտրելով տուփից:
- Նախշավոր շոկոլադ, - ասաց Փոքրիկը՝ տուփը բանալով:
- Այս երկուսն էլ ձեզ համար եմ պահել... Վերցրու, Մարկոս: Վերցրու, Շեկո, շատ համեղ են...
Երկար խնդրելու հարկ չեղավ: Նախշավոր շոկոլադներն իսկույն հալվեցին տղաների բերաններում:
- Դու լավ տղա ես, գիտե՞ս, - ասաց Մարկոսը ձեռքը դնելով Փոքրիկի ուսին:
- Որ լիներ էլի կտայի, - ուրախ ասաց տղան:
- Ես շոկոլադ չեմ սիրում, - ասաց Մարկոսը:
- Ես էլ, - ավելացրեց Շեկոն: - Այ, եթե տուփը տայիր ինձ...
- Դե, դե, ինձ է տալու, - վրա տվեց Մարկոսը՝ տուփը խլելով Փոքրիկի ձեռքից: - Ինձ ես տալու, չէ՞:
- Չէ, չէ, Մարկոս, - աղերսագին ասաց Փոքրիկը: - Ուզում ես սուլիչս վերցրու: Ուզում ես՝ հայելիս: Ուզում ես գնամ հոլս բերեմ, մենակ թե տուփը մի վերցրու, լա՞վ:
- Ուրեմն չե՞ս տալիս:
- Չէ: Մարկոս, ինչ ուզում ես կտամ, մենակ թե...

Խոսքը կիսատ մնաց տղայի բերանում:
- Որ էդպես է, ոչ ինձ, ոչ էլ քեզ. ըհը... - ասաց Մարկոսը և տուփը իբր թե «շպրտեց» նկուղի պատուհանի ուղղությամբ:
- Ինչ արեցիր, հը՞, - լացակումած ասաց տղան:
- Դե հիմա գնա՝ նկուղից հանի....
Փոքրիկը գլուխը կորցրած նետվեց դեպի նկուղը: Մինչդեռ Մարկոսը մեջքի ետևում թաքցրած տուփը գրպանը դրեց ու դարձավ Շեկոյին.
- Գնացինք...
- Լսիր, Մարկոս, ինչքա՞ն նամականիշ տամ էդ տուփին, - ասաց Շեկոն:
- Ոչ մի հատ:
- Հարյուր հատ արտասահմանյան տամ, ավստրալիական կենգուրուն էլ վրան, կտա՞ս:
- Խելքս հո հացի հետ չեմ կերել:
- Լսիր, Մարկոս, ուզո՞ւմ ես... - ասաց Շեկոն և էլի ինչ-որ պայմաններ առաջարկելով, գնաց Մարկոսի ետևից:

6

Կիսախավար նկուղում սառն էր ու խոնավ:
Կիսախավար նկուղում իրար վրա կիտված փայտերի, ածուխների, դատարկ տակառների արանքներում Փոքրիկը փնտրում էր իր նվիրական տուփը: Փնտրում էր ու լալիս: Ասես մի ամբողջ աշխարհ էր կորցրել և դրա համար էլ լալիս էր:
«Ի՞նչ եղավ, հը... Ուր կորավ, հը՞...»: Երկար փնտրեց նա, բայց թզուկներով նկարազարդված տուփը չկար ու չկար:
Լաց լինելով դուրս եկավ նկուղի պատուհանից:
Բակի խորքից գալիս էր Ծերունին՝ դանակ-մկրատ սրելու մեքենան ուսից կախ: Փոքրիկին տեսնելով՝ մոտեցավ:
- Ի՞նչ է պատահել, որդի: Ո՞վ է քեզ նեղացրել:
- Բա ի՞նչ եղավ... Բա ո՞ւր կորավ, - հեծկլտալով ասաց տղան:
- Ի՞նչը կորավ, որդի:
- Իմ թզուկների տուփը: Նկուղում ման եկա, չկա:
- Իսկ ի՞նչ գործ ուներ քո էդ տուփը նկուղում:
- Շպրտեցին...
- Ովքե՞ր:
- Մարկոսն ու Շեկոն:
- Այ ես ձեր, աղվեսներ... - ասաց Ծերունին և ուսից ցած բերեց անիվավոր մեքենան: - Ոչինչ, որդի, սիրտդ իզուր շուռ մի տուր: Արի, արի մի պտտեցրու՝ տեսնեմ...
Փոքրիկը բռունցքներով մաքրեց այտերից ցած հոսող արցունքները, մոտեցավ: Մոտեցավ ու սկսեց մեծ դժվարությամբ պտտեցնել անիվը:
- Ինչ ծանր է, - ասաց նա:
- Պարապ տեղն է պտտվում, - ժպտալով պատասխանեց Ծերունին ու նստեց մոտիկ նստարանին:
- Բա դու չե՞ս հոգնում, - հարցրեց Փոքրիկը՝ անիվը ծանրորեն պտտելով:
- Որ գործ լինի, չեմ հոգնի:
- Իսկ ինչի՞ է ճռռում:
- Կճռա, բա... - ասաց նա ու տնքալով շտկեց մեջքը: - Աշխատել է, շատ է պտտվել... Հալից ընկել է, որդի, դրա համար էլ ճռռում է: Էհ, - հառաչեց Ծերունին, - մարդուս բախտի անիվն

էլ էդպես է. պտտվում է ու ճռռում, պտտվում է ու ճռռում, ու մի օր էլ, թրա՛խկ... Դե ոչինչ, - ծանր մտքերից սթափվելով, ավելացրեց նա:
- Չի յուղվել... Կյուղվի, կուղղվի...
Ծերունին գրպանից ինչ-որ փոքրիկ տուփ հանեց ու բանալով դարձավ տղային.
- Դե, ասա տեսնեմ, հիմա ո՞նց ես:
- Լավ եմ, - ժպտաց տղան: - Բա դու ո՞նց ես...
- Ես էլ լավ եմ, բայց որ գործ լինի, ավելի լավ կլինեմ, - ասաց Ծերունին, բթամատով և ցուցամատով վերցրեց տուփի ժանգագույն փոշուց ու քիթը տարավ:
Փոքրիկն այդ տեսնելով ընդհատեց պտտելը:
- Այդ ի՞նչ է, պապի:
- Քթախոտ:
- Իսկ ինչի՞ ես հոտ քաշում:
- Գլուխս խախուտացել է, որդի, հենց ցուրտ է դիպչում, ցավում է:
- Դա լավացնո՞ւմ է:
- Էն էլ ոնց...
Ծերունի վարպետը մի անգամ էլ երանությամբ քիթը քաշեց քթախոտը, հետո վեր կացավ, մոտեցավ տղային:
- Դե ես գնամ, որդի, հերիք է ինչքան պտտեցիր:
- Ո՞ւր ես գնում, - ափսոսանքով ասաց Փոքրիկը, - մի քիչ էլ մնա, հա՞...
- Չէ, որդի, գնամ: Գնամ մի երկու բակ էլ ման գամ ու գնամ տուն, - ասաց նա, մեքենան նորից ուսն առավ ու գնաց կանչելով,
- Դանակ-մկրա՛տ սրեմ, դանակ-մկրա՛տ...
Բայց ոչ ոք ուշադրություն չէր դարձնում նրա կանչին: Ոչ ոք դանակ կամ մկրատ չէր բերում: Աշխարհում ասես վերջացել էին բոլոր դանակ-մկրատները:
Աշխարհում, ասես, այլևս ոչինչ չկար սրելու:
Փոքրիկն, որ մինչ այդ պլշած նայում էր հեռացող Ծերունուն. հանկարծ պոկվեց տեղից ու վազեց...
Շքամուտքը ցնցվեց նրա ոտնաձայներից:
Նա բաց արեց դուռը, ոտքերից դեն շպրտեց մեծ կոշիկները ու գլխապատառ վազեց խոհանոց:
- Լավ է տուն ես գալիս, - սենյակից լսվեց հոր ձայնը:
Փոքրիկը չպատասխանեց: Ասենք, ժամանակ էլ չուներ պատասխանելու: Նա զբաղված էր պահարանի դարակները քանդրտելով: Ահա նա գտավ իրենց մեծ դանակը, որ միակ սուր դանակն էր, և շտապ դուրս եկավ պատշգամբ: Ինչ-որ տարօրինակ թկթկոց լսելով, պատշգամբ դուրս եկավ Փոքրիկի հայրը: Տղան դանակի բերանը եռանդով խփում էր պատշգամբի ցեմենտե ճաղին ու շրթունքներն ամուր սեղմած, զայրալից կրկնում.
- Ըհը, ըհը, ըհը...
- Ի՞նչ ես անում, այ տղա, - վրդովված ասաց հայրը, փորձելով դանակը վերցնել նրա ձեռքից:
- Գժվե՞լ ես, ինչ է: Ապա մի այստեղ տուր, շուտ...
- Թո՛ղ, թո՛ղ, - լացը կոկորդում սեղմած կրկնում էր տղան և շարունակում դանակով հարվածել ճաղին:
Իսկ բակի խորքից դեռ լսվում էր Ծերունու հեռացող ձայնը.
- Դանակ-մկրա՛տ սրեմ, դանակ-մկրա՛տ...

Անցան օրեր:

Ուշ երեկո է, ամառային տաք երեկոներից մեկը: Փոքրիկը պառկած է պատշգամբում դրված իր մահճակալին, իսկ հայրը ճաղին կռթնած ծխում է: Ամենավերին հարկի պատշգամբից լսվում է կիթառի ձայն և հետն էլ մոտոցիկլետով տղայի երգը.

Ես չգիտես ուր են տանում հեռավոր
Ուղիների ժապավեններն անհամար...

- Էլի երգում է, հայրիկ, - ասաց Փոքրիկը, որ մինչ այդ գլուխը մի կողմ թեքած լուռ լսում էր:
- Քնի՛ր: Նա քեզ չի խանգարում, իր համար երգում է, քնի՛ր...
- Չէ, հայրիկ, իր համար չի երգում, ճակատի մազերը կարճ կտրած աղջկա համար է երգում: Այ տես... - ասաց Փոքրիկը՝ առանձնատան ցանկապատը ցույց տալով:
Ցանկապատի փշալարերի ետևում կանգնած էր առանձնատան տիրոջ աղջիկը: Նա, հայացքը վերևի պատշգամբին հառած, հիացմունքով ականջ էր դնում:
Երգն ու նվագն ընդհատվեց:
Բակում հայտնվեց նվագող տղան:
Բակ ելավ և ճակատի մազերը կարճ կտրած աղջիկը:
Լռություն: Բայց այնպիսի մի լռություն, որ ասես լսվում էին նրանց սրտերի անհանգիստ զարկերը:
- Հը՞, - ասաց տղան:
- Ի՞նչ, - հարցրեց աղջիկը:
- Ոչինչ, - շփոթված պատասխանեց տղան:
- Ինչի՞ ընդհատեցիր:
- Ընդհատեցի՞: Ի՞նչը...
- Լավ էիր երգում:
- Չէի երգում, կանչում էի քեզ, - ասաց տղան: - Երգում եմ, որ դուրս գաս:
- Դուրս եմ եկել, դե՞...
- Ի՞նչ:
- Ոչինչ, - այս անգամ էլ շփոթված ասաց աղջիկը և հարմար բառեր չգտնելով, կմկմաց: - Ասում եմ... Ասում եմ՝ ինչի՞ ես լռում, խոսիր...
Պատշգամբում պառկած Փոքրիկը, որ նրանց խոսքերից ոչինչ չէր հասկանում, դարձավ հորը ու հազիվ լսելի ձայնով շշնջաց.
- Հայրիկ, ի՞նչ են խոսում:
- Քո ի՞նչ գործն է, քնի՛ր: Ուշ է արդեն, քնի՛ր... - ասաց հայրը, հանգցրեց ծխախոտը, ուղղեց տղայի վերմակն ու պատշգամբի լույսը մարելով, ներս գնաց:
Իսկ այնտեղ, առանձնատան ցանկապատի մոտ դեռ կանգնած էին աղջիկն ու տղան: Աղջիկը, չգիտես ինչու, շարունակ վախեցած շուրջն էր նայում: Իսկ տղան կախ էր գցել գլուխը ու ոտքով խաղում էր առջևն ընկած փոքրիկ քարի հետ:
- Քո սիրտը խփո՞ւմ է, - հարցրեց աղջիկը:
- Երևի. - ասաց տղան:
- Ապա՞... - ասաց ճակատի մազերը կարճ կտրած աղջիկն ու ականջը թեքելով տղայի կրծքին, շշնջաց: - Ինչի՞ է այսպես արագ խփում:
- Չգիտեմ, - ուսերը վեր քաշելով, ասաց տղան:
- Իմն էլ է խփում:
- Դա լավ է:
- Եվ ինչքան էլ արագ, տես...
Աղջիկը բռնելով տղայի ձեռքից փորձեց մոտեցնել սրտին, բայց տղան շփոթված ետ քաշեց ձեռքը:

- Լավ է: Այսպես ավելի լավ է...
- Ինչ լավ է, որ մենք միևնույն բակում ենք ապրում, - ասաց աղջիկը:
- Իրարից հեռու բակերում ապրողների սրտերն էլ կարող են այսպես արագ խփել, - ասաց տղան ու մի հայացք գցելով ցանկապատի փշալարերին, մռայլված կախեց գլուխը:
- Ինչի՞ թթվեցիր, - հարցրեց աղջիկը:
- Հորդ ասա, թող ձեր ցանկապատի փշալարերը քանդի:
- Իսկ ձեր պատշգամբին նայելիս ծոծրակս ցավում է:
- Շուտով կքանդեն, - ասաց տղան: - Բետոնից են կառուցելու:
- Չգիտեմ ինչու, բայց փայտե պատշգամբն ինձ ավելի է դուր գալիս:
- Փայտե պատշգամբը հրդեհի բուն է:
- Ձեր պատշգամբից քաղաքը շատ գեղեցիկ է երևում, չէ՞, - հարցրեց աղջիկը:
- Գիշերները միայն:
- Իսկ ցերեկնե՞րը:
- Փշալարերով է պատած:
- Դու կատակում ես, - ծիծաղեց աղջիկը:
- Չեմ կատակում, - զայրալից պոռթկաց տղան: - Հորդ ասա, թող ձեր ցանկապատի փշալարերը քանդի:
- Ինչի՞ համար:
- Չգիտեմ, չեմ կարող ասել:
- Չէ, գիտես և կարող ես ասել, - համառորեն պնդեց աղջիկը: - Ասա՛, ինչի՞ համար:
Տղան բարձրացրեց գլուխը, նայեց աղջկա աչքերի մեջ, նայեց ցանկապատի կողմը ու խանձված ձայնով ասաց.
- Փշալարեր տեսնելիս ես միշտ հորս եմ հիշում:
Լռություն: Առաջինը տղան փորձեց խզել այդ անտանելի լռու-թյունը:
- Ժամը յոթին կինոյի մոտ կսպասեմ, կգա՞ս:
- Կգամ, - ասաց աղջիկը: - Բարի գիշեր...
- Բարի գիշեր, - ասաց տղան, բայց մնաց կանգնած:
- Դե գնա, ուշ է արդեն, - ասաց աղջիկը:
- Դու գնա, հետո ես:
- Չէ, ավելի լավ է դու, հետո ես...
Առանձնատան ցանկապատի դռնակն աղմուկով բացվեց, շեմին կանգնեց առանձնատան տերը: Աղջիկը, հորը տեսնելով, կարկամեց, մնաց տեղում սառած:
- Իսկույն ներս մտիր...
Ճակատի մազերը կարճ կտրած աղջիկն աչքի պոչով նայեց տղային, ապա շփոթված ներս գցեց իրեն:
- Իսկ ձեզ, երիտասարդ, մյուս անգամ իմ դռների մոտ չտեսնեմ, - սպառնալից ասաց առանձնատան տերը և երկաթյա դուռը ետևից շրխկացնելով, ներս գնաց:
Տղան տարտամ, մտամոլոր քայլերով հեռացավ բակից:
Քիչ անց հինգերորդ հարկի պատշգամբից նորից հնչեց նրա կիթառը:
Փոքրիկն այդպես էլ չիմացավ, թե որքան նվազեց տղան: Կիթառի օրորող հնչյունների տակ նա արդեն փակել էր աչքերը և լողում էր երազների աշխարհում:
- Չէ, Մարկոս, ուզում ես սուլիչս վերցրու... Ուզում ես հայելիս տամ, մենակ թե իմ թզուկների...
- քնի մեջ շշնջաց տղան և ձեռքերը ինքնաբերաբար տարավ բարձի տակ: Բարձի տակից լսվեց մի խուլ ծվծվոց.
- Կամաց...

Փոքրիկը շտապով ետ քաշեց ձեռքերը և հանկարծ, այ քեզ բան... Բարձի տակից դուրս ցցվեցին երեք թզուկների գլուխները ճաղատ ու մորուքավոր: Նրանք իրար ետևից ցատկեցին հատակին ու ժպտալով շարվեցին տղայի մահճակալի մոտ:
- Դու մե՞զ էիր փնտրում, - խոսեց թզուկներից մեկը: - Ահա, մենք այստեղ ենք:
- Ի՜նչ լավ է, որ այստեղ եք, - հրճվալից բացականչեց տղան, - ինչ լավ է, որ գտա ձեզ: Ես գիտեմ, դուք շատ բարի եք...
- Այո, - ասաց մյուսը, որ կանաչ մորուք ուներ, իսկ քթին՝ մետաղյա շրջանակով պսպղուն ակնոց: - Մենք շատ ենք սիրում երեխաներին: Չէ՞ որ մենք նրանց արցունքներից ենք ծնվել...
- Մենք լսեցինք քո լացը և... և... - ավելացրեց կարմիր քթով թզուկը և այնպես ուժգին փռշտաց, որ պատշգամբը կարծես դղրդյունով գնաց ու եկավ:
- Նորի՞ց, - վեր թռավ Դեղնամորուքը: - Լսիր, Կարմրաքիթ, ի՞նչ ես մի գլուխ հափչի, հա... հափչի:
- Ի՞նչ անեմ, ես ուղղակի հարբուխ ընկա այդ խոնավ նկուղում:
- Դու գոնե թաշկինակով փակիր բերանդ, թե չէ, ով գիտի, մեկ էլ տեսար վարակեցիր տղային: Իսկ Կանաչամորուքը, որ ակնոցը քթածայրին դրած հատակի վրա ինչ-որ բան էր զննում, բացականչեց.
- Մի այստեղ նայեք, եղբայրներ, այս ի՞նչ փայլուն բաներ են թափված մեր ոտքերի մոտ:
- Տղայի արցունքներն են:
- Զգույշ, չտրորեք Փոքրիկի արցունքները, - տագնապով ծվծվաց Դեղնամորուքը և արտասուքի կաթիլները մեկիկ-մեկիկ հավաքելով ափի մեջ, ավելացրեց, - մենք սրանցից սքանչելի ուլունքներ կպատրաստենք...
- Անպիտաններ, - թնկթնկաց Կարմրաքիթը, - նրանք շպրտեցին մեզ մութ նկուղը և լացացրին այս տղային:
- Լսեք, եղբայրներ, պետք է մի լավ պատժել Մարկոսին ու Շեկոյին, - ակնոցն ուղղելով ասաց Կանաչամորուքը ու պատշգամբի ճաղի վրայից թռավ բակ: - Իմ ետևից...
- Սպասեք, բարի թզուկներ, - սրտապատառ ճչաց տղան ու բակ թռչելով, վազեց թզուկների ետևից: - Սպասեք, բա հայրիկս ասում էր, որ դուք բարի եք և շատ եք սիրում երեխաներին:
- Մենք սիրում ենք բարի երեխաներին:
- Իսկ նրանք չար են, վատ են վարվում քեզ հետ:
- Չէ՛, չէ՛, նրանք չար տղաներ չեն, մի պատժեք նրանց, - աղերսագին ասաց Փոքրիկը՝ փակելով նրանց ճանապարհը:
- Դե լավ, եթե չես ուզում, չենք պատժի, բայց ի՞նչ կուզեիր, որ անեինք քեզ համար:
- Ես քույր չունեմ, եղբայր չունեմ, կուզեի, որ Մարկոսն ու Շեկոն իմ եղբայրները լինեին:
- Հասկանալի է, - տղայի խոսքերից ազդված հառաչեց Կարմրաքիթը և թաշկինակը սեղմեց աչքերին:
Թզուկները քիթ-քթի կպած ինչ-որ բան շշնջացին, և հանկարծ...
- Այս ի՞նչ է, - ձեռքը ճաղատին տանելով, ասաց Դեղնամորուքը: - Այս պարզ եղանակին անձրև՞...
- Այո, իմ քթին էլ կարծես ինչ-որ բան կաթեց, - հաստատեց Կարմրաքիթը և նայեց վեր: - Դե, իհարկե, անձրև է գալիս...
- Չէ, չէ, անձրև չի, բարի թզուկներ, - ասաց տղան, - ծառն է լաց լինում: Ճյուղը կտրեցին, դրա համար էլ ծառը լաց է լինում: Նայեք...
Եվ ճիշտ որ... թթենու կտրված մասից ցած էին թափվում արցունքի պես զուլալ-զուլալ կաթիլները:

- Ոչինչ, Փոքրիկ, մենք հիմա այնպես կանենք, որ ծառն այլևս լաց չլինի: Դիլլի, Բոբի, Բոբ... - բացականչեց Կանաչամորուքը, ա նրա ձեռքի մեջ հայտնվեց հայելու մի կտոր, ճիշտ և ճիշտ Փոքրիկի հայելու նման:
Թզուկն արևի շողքն ուղղեց թթենու կտրված մասին ու մի քանի անգամ քթի տակ կրկնեց.
- Դիլլի, Բոբի, Բոբ...
Եվ՝ այ քեզ հրաշք... Կտրվածքից մի փոքրիկ ճյուղ դուրս եկավ՝ կանա՛չ, կանա՛չ: Տղան ուրախ թռչկոտում էր, իսկ ճյուղն աճում էր, աճում և, ցանկապատի վրայից դուրս գալով, տարածվում բակի վրա:
- Ինչ կլինի, Կանաչամորուք, - անհամբեր ասաց տղան, - տուր ինձ այդ հայելին: Դա ինձ շատ է պետք, շա՛տ, շա՛տ...
- Դե լավ, որ այդքան շատ ես ուզում, վերցրու, - ասաց Կանաչամորուքը: - Վերցրո՛ւ, սրանով արև գցիր աշխարհի վրա, ասա. Դիլլի, Բոբի, Բոբ... և բարին կկատարվի:
Եվ հանկարծ, այ քեզ բա՛ն... Դեղնամորուքը բռնեց կուրծքն ու հենվելով առանձնատան ցանկապատին, սկսեց արագ հևալ:
- Ի՞նչ պատահեց քեզ, Դեղնամորուք, - այլայլված հարցրեց տղան:
- Սիրտս... - նվաղած ասաց նա: - Սիրտս նորից սկսեց բաբախել:
- Իմն էլ... - ավելացրեց Կարմրաքիթը՝ իր զարկերակը բռնելով: - Եվ ինչքան էլ արագ է խփում, որպեսզի յոթ հազար զարկ...
- Պարզ է, ուրեմն էլի ինչ-որ տեղ երեխայի են վշտացրել, և նա լաց է լինում, - տագնապով վրա տվեց Կանաչամորաքը: - Շտապենք, եղբայրներ, պետք է իսկույն օգնության հասնել նրան...
Թզուկներն այնպես էին դողում, թպրտում, որ Փոքրիկը վախեցած ճչաց.
- Ի՞նչ եղավ ձեզ, ի՞նչ եղավ...
- Մենք միշտ էլ այսպես տանջվում, վատ ենք զգում, երբ որևէ տեղ երեխա է լալիս...
- Մի տանջվեք, բարի թզուկներ, - աղերսեց տղան: - Գուցե նա հենց այնպես է լաց լինում:
- Չէ, չէ, Փոքրիկ, հենց այնպես լաց չեն լինում, - ասաց կարմրաքիթը:
- Աշխարհում ոչ ոք հենց այնպես լաց չի լինում, - ավելացրեց Դեդնամորուքը:- Մնաս բարո՛վ...
- Գնո՞ւմ եք, - ափսոսանքով ասաց տղան:
- Գնում ենք, - ասացին թզուկները միաբերան: - Բայց որ կանչես, էլի կգանք...
- Մնաս բարո՛վ, Փոքրիկ, մնաս բարո՛վ...
... Ահա Փոքրիկը նստել է իրենց պատշգամբի ճաղին և թզուկների տված հայելիով արև է գցում աշխարհի վրա: Ահա բակում, երկանիվ հեծանիվներ նստած հայտնվում են Մարկոսն ու Շեկոն: Փոքրիկը շտապով ցած է իջնում ու վազում նրանց ետևից:
- Ինչ կլինի, Մարկոս... Ինչ կլինի, Շեկո, ինձ էլ նստեցրեք, հա՞...
- Հեռու քաշվիր, - ճչում է Շեկոն:
- Փախիր, թե չէ... - սպառնալից բղավում է Մարկոսն ու հեծանիվի ղեկը թեքում Փոքրիկի վրա:
Բայց տղան ծիծաղելով փախչում է, հայելու շողքը թրթռացնում Մարկոսի ու Շեկոյի աչքերին:
Եվ ահա տղաներն աչքերը կկոցած ցած են թռչում իրենց հեծանիվներից ու ժպտալով մոտենում Փոքրիկին:
- Նստիր, - ասում է Մարկոսը:
- Չէ, ինձ մոտ նստիր, - մեջ է ընկնում Շեկոն:
- Բա որ ընկնե՞մ:
- Չես ընկնի, ես քեզ հետ եմ, - ասում է Մարկոսը:

- Ես էլ... - ավելացնում է Շեկոն:
- Սրանից հետո մենք միշտ քեզ հետ կլինենք: Մենք քո եղբայրներն ենք, նստիր...
- Մի քիչ քեզ մոտ նստեմ, Մարկոս... Հետո էլ քեզ մոտ, Շեկո, լա՞վ...
...Ահա նրանք սլանում են քաղաքի փողոցներով, կամուրջներով, հրապարակներով: Ահա հասնում են կենտրոնական խաչմերուկներից մեկը: Խաչմերուկում կանգնած միլիցիոները բարձրացնում է ձեռքի նախշուն փայտը, և բոլոր մեքենաները միանգամից մեխվում են տեղերում: Միլիցիոները ժպտում ու ճանապարհ է տալիս միայն հեծանիվով տղաներին: Նրանք հպարտ ու հանդիսավոր անցնում են խաչմերուկը և նորից թափով սլանում առաջ: Եվ ո՜նց են սլանում, քամուց էլ արագ: Փոքրիկի սիրտն ուրախությունից քիչ է մնում պայթի:
- Ահա նրանք նորից մոտենում են իրենց բակին: Ահա ձեռք ձեռքի, բակով վազում են ճակատի մազերը կարճ կտրած աղջիկն ու կիթառ նվազող տղան: Առանձնատան ղարպասից դուրս է գալիս աղջկա հայրը՝ սղոցը ձեռքին, սանդուղքն ուսին դրած: Տեսնելով աղջկան կիթառ նվագող տղայի հետ, նա բարկացած ցած է դնում սանդուղքն ու բղավում.
- Նորի՛ց միասին... Դե ես հիմա ձեզ...
Եվ մինչ առանձնատան տերը սղոցը թափահարելով կնետվեր ղեպի աղջիկն ու տղան, Փոքրիկը հայելու շողքը շտապով ուղղում է նրա աչքերին:
- Դիլլի, Բոբի, Բոբ...
Առանձնատան տիրոջ ձեռքը քարանում է օդում: Նա միանգամից փոխվում, դառնում է սիրալիր:
- Ախ ջահելներ, ջահելներ, զվարճանալ չգիտեք: Ի՞նչ եք վազվզում բակում: Գնացեք զբոսնեք, - ասում է նա՝ համբուրելով աղջկան ու տղային:
Նրանք մի պահ զարմացած նայում են իրար, ապա ձեռք ձեռքի բռնած ուրախ դուրս են վազում բակից: Իսկ առանձնատան տերը սանդուղքը հենում է ցանկապատին ու սղոցը ձեռքին բարձրանում:
- Ի՞նչ ես անում, քեռի, - սարսափած ճչում է տղան:
- Մի վախեցիր, Փոքրիկ, փշալարերն եմ կտրում, - ասում է նա: - Փշալարերը տխրեցնում են մարդկանց: Իսկ դու ինչո՞ւ ես կուչ եկել, արի թութ կեր: Կանչիր բոլոր երեխաներին, թող նրանք Էլ ուտեն, թե չէ իզուր տեղը թափվում, տրորվում է ոտքի տակ:
...Ահա բակը լցվում է երեխաներով, անթիվ-անհամար երեխաներով: Նրանք սկսում են ուտել նոր աճած ճյուղի թթերը:
- Ինչ քաղցր է, - երանությամբ ասում է Մարկոսը:
- Էսպիսի թութ աշխարհում չկա, - ավելացնում է Շեկոն: Ահա նրանք մեծ ու լայն քաթանի եզրերից բռնած կանգնել են հսկա թթենու տակ: Առանձնատան տերը բարձրացել է ծառին, փայտե թակիչով հարվածում է ճյուղին ու շարունակ կրկնում.
- Կերեք, սիրելիներս... Կերեք, աղավնյակներս...
Անձրևի նման խշշալով ցած են կաթկթում թթերը: Բոլորն ուրախ քրքջում են:
Հանկարծ այգու խորքից հայտնվում է Գամփռը: Շունը կատաղած հաչում է ու նետվում երեխաների վրա: Բոլորը սարսափած ճչում են, սեղմվում իրար:
- Մի վախեցեք, ես հիմա, - ձայն է տալիս Փոքրիկը և հայելու շողքը գցում շան աչքերին:
Շունը խեղճացած կանգ է առնում, ապա պոչը խաղացնելով սողեսող մոտենում, քսմսվում է նրանց:
...Ահա ընդհանուր բակի նստարաններից մեկին թիկնել է դանակ-մկրատ սրող ծերունին, առջևը՝ անիվավոր մեքենան: Ծերունին, հոգնած հայացքը սահեցնելով շենքի պատշգամբների վրա, կանչում է.
- Դանակ-մկրա՛տ սրեմ, դանակ-մկրա՛տ...

Բայց էլի ոչ ոք ուշադրություն չի դարձնում նրա կանչին: Ոչ ոք դանակ կամ մկրատ չի բերում սրելու:
Փոքրիկը բռունցքով շփում է քիթը, հայելին պահում արևի ուղղությամբ և շողքը գցելով շենքի պատշգամբներին, կոկորդով մեկ բղավում.
- Դիլլի, Բոբի, Բոբ.... Դանակ-մկրատ սրե՛նք, դանակ-մկրա՛տ...
Ահա պատշգամբ են թափվում շենքի բնակիչները:
- Դանակ-մկրատ սրողն է եկել, - բացականչում է մեկը:
- Ի՛նչ ես ասում, - ուրախացած ծոր է տալիս մյուսն ու գլխապատառ նետվում խոհանոց:
- Աղջի, մի էն հացի մեծ դանակը բեր, - ձայնում է մի ուրիշը:
- Ահա գլուխները կորցրած բակ են վազում հարևանները՝ ամեն մեկի ձեռքին մի դանակ, մի մկրատ կամ մի այլ բան:
- Ո՞վ է վերջինը...
- Ես, - ասում է Փոքրիկի հայրը՝ դանակներով և մկրատներով լի ծանր ցանցը դնելով գետնին:
- Հերթի կանգնեք, ուր եք խցկվում, - բղավում է մեկ ուրիշը:
Պտտվում է փայտե անիվը, և ծերունին երգելով սրում է ու
սրում: Թեպետ քրտինքը հոսում է ճակատից, բայց նա ուրախ է, շատ ուրախ: Իսկ տղան ձեռքը պահում է սրաքարից թռչող կայծերի դեմ ու ծիծաղում...

8

Փոքրիկը բաց արեց աչքերը:
Երազ էր: Լավ, գեղեցիկ, սքանչելի մի երազ, գուցե և լավագույնը իր տեսած բոլոր երազներից: Նա նորից ուզեց տեսնել այդ ամենը, ամուր փակեց աչքերը, բայց իզուր... Արևի չարաճճի շողը թրթռաց նրա թարթիչների մեջ և խուտուտ տվեց:
Տղան նստեց անկողնում, տրորեց քնաթաթախ աչքերն ու սկսեց ինչ-որ բան որոնել:
- Ո՞ւր է... Ո՞ւր է...
- Այդ ի՞նչ ես փնտրում, - հարցրեց հայրը:
- Հայելին:
- Անկողնում հայելի չի լինում: Նախ վեր կաց, հագնվիր, լվացվիր, նոր հետո հայելուն կնայես:
Փոքրիկը շտապ իջավ մահճակալից ու սկսեց անհամբերությամբ պրպտել շալվարի գրպանները: Ահա և հայելին: Ժպտաց...
Բակ մտավ փոստատարը՝ նամակներով, լրագրերով լիքը պայուսակն ուսից կախ:
- Դուք նամակ ունեք, - ձայն տվեց շքամուտքից դուրս եկող հարևանին և, ձեռքը դեպի պայուսակը տանելով, ընդառաջ գնաց:
Նա ձախ ձեռքով էր բաժանում մարդկանց նամակները, լրագրերը, հեռագրերը, իսկ աջը... Աջն անշարժ կախ էր ընկել կողքից: Եվ որքան էլ նա աշխատում էր աննկատ պահել սև ձեռնոցով «ձեռքը», այնուամենայնիվ, մարդիկ նկատում էին, մռայլվում:
Տարիներ շարունակ նա լրագրեր, նամակներ, հեռագրեր էր բաժանել այս բակի մարդկանց: Գիտեր՝ որ ընտանիքն ինչ հոգսով է ապրում, ինչի սպասում: Բոլոր դռները բաց էին նրա առջև: Բայց, այնուամենայնիվ, այդ բակում կար մի դուռ, որ միշտ անհրապույր ճռռոցով էր դիմավորում նրան: Քարե ցանկապատով շրջափակված առանձնատան դուռն էր դա:
Փոստատարը լրագրերից առանձնացրեց մի քանիսը և հրեց դարբասի երկաթյա դռնակը: Լսվեց շան հաչոց: Հավանաբար իր վրա հարձակվող շնից հանկարծակիի եկած, նա շտապով ծածկեց դուռը:
- Ես միշտ մոռանում եմ, որ այս բակում շուն կա, - ասաց նա ինքն իրեն ու շփոթված տարուբերեց գլուխը:
Դուրս եկավ առանձնատան տերը:

- Սա ինչ բան է, - ասաց փոստատարը:
- Ի՞նչ է պատահել:
- Ի՛նչ պիտի պատահի, ամբողջ բակը պարսպել, փշալարերով եք պատել հերիք չի, շանն էլ բաց եք թողել մարդկանց վրա:
- Դա ձեր ի՞նչ գործն է, ընկեր փոստատար, - հեգնանքով ծոր տվեց առանձնատան տերը:
- Իսկ թերթերն ինչպե՞ս ձեզ հանձնեմ:
- Դռան արանքից ներս գցեք:
- Թերթերը չի կարելի բակում շաղ տալ, փոստարկղ կախեք:
- Ուրիշ էլ ի՞նչ կհրամայեք, ընկեր փոստատար:
Վեճը սկսեց թեժանալ: Փոքրիկը, որ իրենց պատշգամբում կանգնած դիտում էր այդ ամենը, ձեռքը շտապով գրպանը տարավ:
- Ինչի՞ են կռվում, ինչի՞...
- Ես կհրաժարվեմ ձեր թերթերը բերել, - վրդովված ասաց փոստատարը:
- Իսկ ես կբողոքեմ, - իր թերթերը վերցնելով նրա ձեռքից, կոկորդով մեկ բղավեց առանձնատան տերը: - Դուք վատ և անբարեխիղճ փոստատար եք:
- Բա դուք, դուք...
Փոքրիկը գրպանից դուրս քաշեց հայելու կտորը և արևի շողը թրթռացնելով նրանց դեմքին, մի քանի անգամ ցածրաձայն կրկնեց.
- Դիլլի, Բոբի. Բոբ....
Նա ուզում էր, որ ճյուղ կտրող քեռին ու փոստատարը չկռվեն: Ուզում էր, որ հիմա, հենց հիմա նրանք գրկեն իրար, համբուրվեն ու ժպտան:
Բայց...
- Ես քո ականջները կկտրեմ, անդաստիարակ, - բղավեց առանձնատան տերը՝ մատը թափ տալով Փոքրիկի վրա:
- Ախր ես... Ես... - կմկմաց տղան ու ընկճված նայեց հայելուն:
Առանձնատան տերն ինչ-որ անհասկանալի բառեր մռթմռթաց քթի տակ ու ներս գնաց՝ դուռը ետևից շրխկացնելով: Թևանցուկ արած բակ մտան հինգերորդ հարկում ապրող ձեռնափայտով ծերուկն ու նրա կինը: Տեսնելով փոստատարին՝ ծերուկը հանեց ծղոտե լայնեզր գլխարկն ու հարգալից ողջունեց նրան:
- Բարև ձեզ, - շփոթված պատասխանեց փոստատարն ու ծանր մտքերից մի պահ սթափվելով, ձեռքը պայուսակը տարավ: - Մի րոպե...
Ծեր ամուսինները կանգ առան:
- Ես այստեղ կարծեք ինչ-որ բան ունեմ ձեզ համար, - սիրալիր ժպիտով ասաց նա և մի ծրար մեկնելով ծիրունուն, քայլերն ուղղեց դեպի շքամուտքը:
Ծերուկն իրեն գցեց անկյունում դրված նստարանին և ակնոցը ուղղելով, անհամբեր բաց արեց ծրարը: Նա արագ աչքի անցկացրեց գրությունը և դառնալով կնոջը, դառնությամբ ասաց.
- Դիմիր, հա դիմիր: Իսկ ես ինչ էի ասում: Խնդրեմ, կարդա...
Կինը վերցրեց գրությունը:
- Ոչ, - ծոր տվեց նա հայացքը երկտողից չկտրելով: - Սա դեռ բոլորովին էլ մերժում չէ:
- Հապա ի՞նչ է:
- Այնուամենայնիվ, նրանք խոստանում են հետագայում հինգերորդ հարկից մեզ ցած իջեցնել:
- Հըմ, հետագայում... - քմծիծաղ տվեց ծերունին: - Հետագայում, սիրելիս, առանց դիմումի էլ մեզ ցած կիջեցնեն:

- Սխալվում ես, - վրա տվեց կինը: - Եթե քո ոտքերն արդեն դավաճանում են քեզ, ապա իմը դեռ բավականաչափ ամուր են: Ես դեռ կստիպեմ նրանց հարգել մեր ծերությունը: Կստիպեմ հասկանալ, թե ինչ կնշանակի մեզ համար շարունակ վեր ու վար անել աստիճաններով: Այո, ես կշարունակեմ բախել դռները:
- Բախիր, սիրելիս, բախիր, դռները նրա համար են ստեղծվել, որ բախեն: Իսկ հիմա արի մի փոքր շունչ առնենք, որ կարողանանք հինգերորդ հարկ բարձրանալ...
«Հինգերորդ հարկ...», - կրկնեց Փոքրիկը մտքում: Նա շատ լավ է հասկանում, թե ինչքան դժվար է ծերուկների համար աստիճաններով հինգերորդ հարկ բարձրանալ:
Բայց ոչինչ: Նա հիմա գործի կդնի իր հայելին և ամեն ինչ կլինի այնպես, ինչպես թզուկներն էին ասում:
- Դիլլի, Բոբի, Բոբ.... - ոգևորված կրկնեց տղան և հայելու շողքը ուղղեց նրանց վրա:
- Ի՞նչ ես անում, այ տղա, - աչքերը կկոցելով ասաց ծերունին:
- Էլ ուրիշ զբաղմունք չունե՞ս, - հանդիմանեց կինը: Բայց հայելու շողքը համառորեն շարունակում էր թրթռալ նրանց աչքերի մեջ:
Ծերունին սրտնեղած ոտքի կանգնեց:
- Սպասեք: Սի քիչ էլ որ սպասեք, ես հիմա... - ձայն տվեց տղան: - Դիլլի, Բոբի, Բոբ... Դիլլի, Բոբի, Բոբ...
- Լսիր, տղա, թող այդ դիլլիբոբները, թե չէ ես ստիպված կլինեմ ձեռնափայտով մի լավ շրխկացնել քո փափուկ տեղին, - հուզված ասաց ծերուկն ու, դառնալով կնոջը՝ ավելացրեց:
- Կարգին երեխա էր, ի՞նչ է պատահել սրան, չեմ հասկանում:
Ծերունիները շենքի շքամուտքից ներս մտան: Հեռվից դեռ երկար ժամանակ լսվում էին աստիճաններով վեր բարձրացող ծերունու ձեռնափայտի խուլ, հաճախակի ընդհատվող տկտկոցները: Իսկ Փոքրիկը կանգնել էր բակի մի անկյունում և փշրված հայացքը հայելուց չկտրելով, բարձրաձայն հարցնում էր ինքն իրեն.
- Բա ինչո՞ւ է այսպես, հը՞... Բա ինչո՞ւ չի ստացվում, հը՞...
- Այդ ի՞նչը չի ստացվում...
Փոքրիկը հեսնկարծակիի եկած բարձրացրեց գլուխը: Գրող քեռին էր:
- Բարև, - շփոթված ասաց տղան:
- Բարև, - ժպտալով պատասխանեց գրողը:
- Նրանք քեզ ի՞նչ ասացին...
- Ովքե՞ր:
- Նրանք, որ իսկական կինո են հանում:
- Ա՜, - ծոր տվեց գրողը: - Դեռ ոչինչ չեն ասել, տանում են ու բերում:
- Իսկ դու մեզ համար էլի կինո ցույց կտա՞ս:
- Ցույց կտամ... - ասաց գրողն ու սեղմելով Փոքրիկի քիթը, գնաց:
Եվ հենց այդ պահին բակի խորքից լսվեց Փոքրիկի համար այնքան նվիրական ձայնը.
- Դանակ-մկրա՜տ սրեմ, դանակ-մկրա՜տ...
Տղան գլխապատառ վազեց տուն: Քիչ անց նա հայտնվեց բակում, փչացրած հացի մեծ դանակը ձեռքին:
- Բարև, - ասաց տղան՝ ընդառաջ գնալով Ծերունուն:
- Բարի լույս, որդի, ո՞նց ես:
- Լավ եմ, բա դու ո՞նց ես:
- Լավ եմ, որդիս:
- Առ սրի, հա՞, - ասաց Փոքրիկը, բերանը թափած դանակը մեկնելով Ծերունուն:
- Սրեմ, որդի, սրեմ, - ժպտալով ասաց նա, ուսից ցած իջեցնելով անիվավոր մեքենան:

- Սա էլ տասնհինգ կոպեկ, մեր պահարանի տակից գտա: Հոլիս թելն էի ման գալիս, գտա: Վերցրու...
- Փող պետք չի, պահիր՝ քեզ համար պաղպաղակ կառնես...
Անիվը ճռռոցով պտտվեց, սրաքարերը գլորվեցին: Տղան նորից ձեռքը պահեց փայլփլուն կայծերի դեմ: Կայծերն այս անգամ կարծես ավելի շատ էին խուտուտ տալիս նրա ձեռքի ափը, և տղան ծիծաղում էր պայծառ, զրնգուն մի ծիծաղով:
- Ո՞ւր էիր, չէիր գալիս: Սպասում էի, բայց դու չէիր գալիս:
- Ցախատունն էր գցել, դուռը կողպեքով փակել էր վրան:
- Ո՞ւմ:
- Սրան, - ասաց ծերունի վարպետը մեքենան ցույց տալով:
- Ո՞վ էր կողպել:
- Իմ տղան... Ասում է՝ ամոթ է: Ասում է՝ ինչդ է պակաս, որ ուսիդ գցած շրջում ես թաղից թաղ: Հերիք է ինչքան աշխատեցիռ- Հիմա, ասում է, քո հանգստանալու ժամանակն է, ման արի քեզ համար բուլվար գնա... Դու հասկանո՛ւմ ես, որդի, իմ հանգստանատ ժամանակն է: Ասել է թե...
Ծերունու ձայնը դողաց: Սրաքարերը մի պահ կանգ առան, ապա սկսեցին պտտվել ավելի ուժգին, ավելի թափով:
- Մի շաբաթ է, - շարունակեց նա, - սրան գցել էր ցախատունը, դուռը կողպեքով փակել էր վրան: Ամեն առավոտ բանալին գրպանն էր դնում, գնում աշխատանքի, բայց ես...
Ամեն անգամ մոտենում էի ցախատան պատուհանին ու ճաղերի արանքից ներս նայում: Նայում էի ու սիրտս մղկտում էր: Նայում էի ու մտածում, ախր տարիներով աշխատել ենք իրար հետ, իսկ հիմա արի տես, որ մեզ ստիպում են ժանգոտել, սրան՝ ցախատան մեջ, իսկ ինձ՝ դրսում: Հարսս լավն է: Նա ինձ հասկացավ, էս առավոտ ցախատան բանալին թաքուն ձեռքս դրեց ու ասաց. «Վերցրու, տեսնում եմ առանց նրա չես կարողանում ապրել»: Դու հասկանո՞ւմ ես, բաց արի ցախատան դուռը, գժի պես վրա պրծա, սրան ուսովս գցեցի ու հայդա, ուղիղ քեզ մոտ...
- Դանակ-մկրա՛տ սրենք, դանակ-մկրա՛տ... - կանչեց Փոքրիկը պատշգամբներին նայելով: Նա գրպանից դուրս քաշեց հայելու կտորը և շողքը թրթռացնելով պատշգամբների վրա մի քանի անգամ քթի տակ կրկնեց: - Դիլլի, Բոբի, Բոբ.... Դիլլի, Բոբի, Բոբ.... - աստիճանաբար նրա ձայնը դարձավ հուսահատ ու տագնապալից: Եվ ահա տեսնելով, որ մարդ չկա, նա բարձրացրեց հայելին ու խփելով գետնին՝ ջարդ ու փշուր արեց: - Չի ստացվում... Չի ստացվում...
- Ինչի՞ համար, որդի: Արևը լավ բան է: Արևը գետնին չեն խփի...
- Բա թզուկներն ինչի՞ էին ասում. «Դիլլի, Բոբի, Բոբ»...
Ծերունին նրա խոսքերից ոչինչ չհասկանալով, զարմացած վեր քաշեց ուսերը:
Անիվը կանգնեց: Ծերունին դանակը տվեց տղային և ուղղեց քթի ծայրին թառած ակնոցը:
- Շուտ տուն տար, ձեռքդ չկտրես, - ասաց նա, հետո բարձրացրեց քաթանե գոգնոցը և գրպանից երկու չաղլիկ ծիրան հանելով, մեկնեց տղային: - Առ, որդի, կեր...
- Բա քե՞զ:
- Դու կեր, որ շուտ մեծանաս:
- Որ մենք էլ ծիրան առնենք, ես էլ քեզ կտամ...
Ծերունին գրկեց տղայի գլուխը և ամուր, շատ ամուր սեղմեց կրծքին:
- Ես էլ շուտով թոռնիկ կունենամ, - հուզված ասաց նա, - որ ծիրան առնեք, դու էլ նրան կտաս...

Փոքրիկը բլսրձրացրեց գլուխը, նայեց Ծերունու մետաղյա շրջանակով ակնոցին, կկոցած, ժպտուն աչքերին ու չգիտես ինչու տղային թվաց, որ այդ բարի, մորուքավոր ծերունու աչքերով իրեն էր նայում երեք թզուկներից մեկը՝ Կանաչամորուքը:
- Բա քո մորուքը ինչի՞ կանաչ չի, - ասաց տղան:
Ծերունին ծիծաղեց:
- Որ նորից ջահելանամ, կկանաչի, - ասաց նա, համբուրեց Փոքրիկին, անիվավոր մեքենան ուսովը գցեց և գնաց ուրախ ու առույգ քայլերով:
Իսկ Փոքրիկը դեռ կանգնած նայում էր հեռացող Ծերունու ետևից ու մտածում.
«Բա հայրիկն ինչի՞ էր ասում, թե բարի թզուկներն ապրում են միայն հեքիաթներում...»:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

1

Օրերն անցնում Էին իրար ետևից, շաբաթը՝ շաբաթի, բայց Ծերունին չէր երևում: Իսկ տղան անհամբեր սպասում էր: Քնած, թե արթուն շարունակ Ծերունու անունն էր տալիս, խոսում նրա հետ: Իսկ առավոտները, արթնանալուն պես, ժամերով հենվում էր պատշգամբի ճաղին ու կարոտով նայում, թե արդյոք բակում չի՞ երևում նա: Հետո երեք անիվանի իր փոքրիկ հեծանիվը շուռ էր տալիս ղեկի վրա, նստում ու թափով պտտեցնում էր առջևի մեծ անիվը, պտտեցնում էր և իր բարալիկ ձայնով կանչում.
- Դանակ-մկրա՛տ սրեմ, դանակ-մկրա՛տ...
«Որտեղի՞ց լույս ընկավ այդ ծերուկն ու հիմա էլ ոտով-գլխով չքացավ», - մտածում էր հայրը:
Իսկ Փոքրիկը հարցնում էր ու հարցնում.
- Բա ե՞րբ է գալու դանակ-մկրատ սրող կանաչամորուքը:
- Քեզ ասացին, որ նրա մորուքը բոլորովին էլ կանաչ չէ:
- Չէ, կանաչ է, կանաչ է, կանաչ է, - պնդում էր տղան:
- Դե լավ, լավ, կանաչ է, պրծա՛նք...
- Բա ե՞րբ է գալու:
- Կգա, մի օր կգա:
- Իսկ քանի՞ անգամ քնեմ ու վեր կենամ, որ գա:
- Չգիտեմ:
- Որ հարյուր անգամ քնեմ ու վեր կենամ, կգա՞:
- Կգա, անպայման կգա, - հուսադրում էր հայրը: Եվ տղան այդ հույսով քնում էր ու վեր կենում:
...Եվ այսպես, Փոքրիկը հարյուր անգամ քնեց ու վեր կացավ և դարձավ յոթ տարեկան: Դարձավ ու տեսավ, որ այնքան էլ դժվար բան չէ յոթ տարեկան դառնալը: Եթե ուզեն՝ բոլորն էլ կարող են դառնալ: Բա դանակ-մկրատ սրող պապիկն ինչի՞ էր ասում, որ ինքը յոթ հարյուր անգամ էլ քնի ու վեր կենա, էլ յոթ տարեկան չի դառնա:
- Այդպես է, - ասաց հայրը ծխախոտի ծուխը ներս քաշելով:
- Բա ինչի՞ է այդպես:
- Որովհետև... Ը, դե որովհետև նա յոթանասուն տարեկան է: Նա արդեն մեծ է:
Ուրեմն նա բոլորից մեծ է, մտածեց տղան, շատ մեծ՝ ամպի չափ: Եվ չգիտես ինչու, Փոքրիկին թվաց, թե դանակ-մկրատ սրող այդ բարի ծերունին ոչ թե յոթանասուն, այլ յոթ հազար տարի է ինչ գոյություն ունի այս մեծ, այս զարմանալի աշխարհում:
- Հայրիկ, ա՛յ հայրիկ...
- Ի՞նչ է:
- Նա կարո՞ղ է յոթ հազար տարեկան դառնալ:

- Չի կարող:
- Իսկ ինչի՞ չի կարող, - նորից հարցրեց նա:
Հայրը մի պահ լռեց: Ի՞նչ ասել, ինչպե՞ս պատասխանել այդ անմեկնելի, այդ դժվար, այդ դաժան հարցին:
- Դե դու հանգիստ թող այդ ծերուկին ու քնիր, - ասաց նա տղայի բարձն ուղղելով:
- Քունս չի տանում:
- Որ քիչ խոսես, կտանի...
Հայրը հանգցրեց պատշգամբի լույսն ու ներս գնաց:

2

Կիրակնօրյա առավոտ է:
Փոքրիկն արթնացավ, ծնկեց անկողնու վրա ու հենվելով պատշգամբի ճաղին, նայեց շուրջը: Բակի մի անկյունում նստել է կիթառ նվազող տղան: Նրա առջև ընկած է հին մոտոցիկլետը: Կիթառ նվազող տղան ամեն կիրակի իր այդ խարխուլ մետաղյա բարեկամին քարշ էր տալիս բակի մեջտեղը, նստում մի քարի վրա և առջևը շարելով ով գիտի որտեղից ձեռք բերած մասերը, սկսում էր համբերությամբ ու եռանդով հավաքել:
Եվ այսպես, առավոտից մինչև երեկո յուղից սևացած ձեռքերով քանդում է ու մաքրում, ծռում է ու ուղղում, մի խոսքով՝ ամեն կերպ աշխատում է շունչ ու կյանք տալ վաղուց մեռած իր բարեկամին:
- Սկսվեց, - գանգատվեց առաջին հարկում ապրող հարևա-նուհին: - Այս կիրակի էլ շխկութխկով գլուխներս պիտի տանի:
- Ոչինչ, ջահել է, թող շխկացնի: Քանի ուժ կա ձեռքին, թող շխկացնի, - ասաց երրորդ հարկի հարևանը, որ բակ էր իջել խաղողի վազերը ջրելու:
- Իմ թոռն ամբողջ օրը վեր է ընկած թախտին, - գանգատվեց մեկ ուրիշը: - Նա երբեք չի շխկացնում: Նա ոչինչ չի շխկացնում...
- Բոլոր ջահելներն էլ մի սանրի կտավ են, - նորից փնթփնթաց հարևանուհին: - Նրանց բոլորի խելքն էլ գնում է այդ անտեր մոտոցիկլետի համար:
Բոլորը խոսում էին, դատողություններ անում: Պատշգամբի ճաղին հենված Փոքրիկն էր միայն, որ երանությամբ նայում էր կիթառ նվագող տղային: Ա՛խ, ինչպես էր ուզում, որ նրա մոտոցիկլետը շուտ աշխատեր, որ նա նստեր իր մոտոցիկլետին ու հռնդյունով պտտվեր բակում:
Ինչ-որ բան հիշելով, Փոքրիկը ցած թռավ մահճակալից և նետվեց դեպի պատշգամբի անկյունում դրված պահարանը: Նա այնտեղից մի քանի ժանգոտ պտուտակ հանեց ու շտապով բակ թռավ:
- Այ, որ սրանք էլ դնես քո մոտոցիկլետի վրա, կաշխատի, - ասաց նա՝ ձեռքի ժանգոտ պտուտակները մեկնելով տղային:
- Հարկավոր չի, - նեղսրտեց տղան: - Գնա, գլխիս վրա մի կանգնի, գնա, խանգարում ես:
Փոքրիկը քաշվեց մի կողմ ու կախեց շրթունքը: Դանդաղ բացվեց նրա բուռը, և պտուտակները գլորվեցին ոտքերի մոտ: Տղան նայեց գետնին ընկած պտուտակներին, նայեց Փոքրիկին ու ժպտաց քթի տակ:
- Դե լավ, ինչ ես պարապ կանգնել, - ասաց նա: - Տուր պտուտակներդ:
Փոքրիկն արագ հավաքեց իր ոտքերի մոտ թափված պտուտակները:
- Վերցրու, որ էլի գտնեմ, կբերեմ, - ուրախ ասաց նա ու պպզեց տղայի կողքին:
Առանձնատան ցանկապատի կիսաբաց դռնից շարունակ ներս ու դուրս էր անում ճակատի մազերը կարճ կտրած աղջիկը: Նա ամեն կերպ աշխատում էր տղայի հայացքը գոնե մի պահ

կտրել այդ անիծված մոտոցիկլետից, բայց իզուր... Տղան մոտոցիկլետի մասերից բացի ուրիշ ոչինչ չէր տեսնում:
Աղջիկը դուրս ելավ իրենց բակից այս անգամ էլ մի փոքրիկ կարպետ ձեռքին: Հայացքը չկտրելով տղայից նա կարպետն ուժգին շրմփացրեց ցանկապատին: Տղան բարձրացրեց գլուխը:
- Մի քիչ կամաց, ինչ ես փոշի բարձրացնում, - ասաց նա:
- Մեր կարպետը շատ մաքուր է, - պոռթկաց աղջիկը: - Կարող ես հանգիստ մնալ...
- Բա էլ ինչի՞ ես թափ տալիս, - հարցրեց Փոքրիկը:
- Դա քո գործը չի, իմացա՞ր...
Փոքրիկը շփոթված կախեց գլուխը: Իսկ տղան ժպտաց քթի տակ:
Աղջիկը խեթ-խեթ նայեց տղային, նայեց նրա առջև փռված մոտոցիկլետին և կարծես կռվի պատրաստ, ասաց.
- Լսի՛ր, արի քարանձավով լիճը գնանք, նավակ կնստենք:
- Չեմ կարող, - գլուխն առանց բարձրացնելու պատասխանեց տղան: - Մի ուրիշ անգամ, հիմա չեմ կարող...
- Էլի՞ ուրիշ անգամ: Էլի՞ չես կարող...
- Տեսնում ես՝ զբաղված եմ:
- Դու վերջերս շարունակ զբաղված ես: Դու ամեն ինչով զբաղված ես, մենակ...
- Դե հասկացիր, մինչև սա գլուխ չբերեմ, ոչ մի տեղ էլ չենք գնա...
Աղջիկը շուռ եկավ, գլխի կտրուկ շարժումով ուսերին թափված մազերը ետ շպրտեց և քիթը վեր ցցած ներս մտավ:
- Բա ե՞րբ ես գլուխ բերելու, - հարցրեց Փոքրիկը՝ հայացքը մոտոցիկլետից չկտրելով:
- Շուտ կբերեի, եթե ժամանակ լիներ: Ցերեկն աշխատանքի եմ, երեկոյան՝ դասի: Սրանով զբաղվելու ժամանակ չկա: Ես միայն կիրակի օրերը, հասկանո՞ւմ ես:
- Ոչինչ, կաշխատի: Այ կտեսնես, կաշխատի...
Դարպասի դռնակը նորից բացվեց, դուրս եկավ ճակատի մազերը կարճ կտրած աղջիկը՝ մածնով լի շշերով ցանցը ձեռքին: Նա, քիթը վեր ցցած, ձգված քայլերով անցավ տղայի կողքով, ցույց տալով, թե իսկի չի էլ նկատում նրան: Աղջիկը դեռ մի քանի քայլ չէր արել, երբ Փոքրիկը ձայն տվեց նրա ետևից.
- Այդ ո՞ւր ես գնում:
- Մածուն առնելու, - առանց շրջվելու պատասխանեց աղջիկը:
- Ի՛... - ծոր տվեց Փոքրիկը: - Մածունն առել եք արդեն...
Աղջիկը կանգնեց, մի հայացք գցեց կախ ընկած ցանցին և նոր միայն նկատելով մածնով լի շշերը, շփոթված ետ դարձավ:
- Լսիր, - ծիծաղելով ձայն տվեց տղան նրա ետևից: Աղջիկը կանգ առավ:
- Ես ոչինչ չեմ ուզում լսել, - դեմքը շրջած ասաց նա: - Իզուր ինձ մի խոսեցնի, լսո՞ւմ ես...
- Դե լավ, - ասաց տղան: - Գնա մի քիչ նավթ բեր:
- Մենք նավթ չունենք, -- խռովածի պես պատասխանեց աղջիկը:
- Լավ, լավ, գնա բեր:
- Իզուր մի խոսեցնի, քեզ ասում եմ՝ մենք նավթ չունենք:
- Մայրդ քիչ առաջ մահճակալի կողերին էր քսում:
- Դա քո գործը չի, իմացա՞ր,.. Քեզ ասացի՝ ինձ հետ մի խոսի: Դու ինձ հետ գործ չունես, լսո՞ւմ ես: Դու խելքդ այդ ժանգոտ մոտոցիկլետին ես տվել: Դու դրան ավելի ես... - լացակումած ասաց աղջիկը և կտրուկ շարժումով մտավ իրենց բակը՝ դուռը ետևից ուժեղ շրխկացնելով:

- Ի՜... - դարձյալ ծոր տվեց Փոքրիկն ու դարձավ տղային: - Դու այս մոտոցիկլետը նրա համար ես պատրաստում, չէ՞:
Տղան ժպտաց, տարուբերեց գլուխը:
- Գիտեմ, - խորամանկ ժպտաց Փոքրիկը, - որ աշխատի, դու նրան կնստեցնես քո մոտոցիկլետի ետևում, ու դուք միասին կգնաք հեռու, հեռու...
- Քեզ էլ հետներս կտանենք:
- Չեմ ուզում... Դու ինձ առջևում կնստեցնես, չեմ ուզում: Ես հիմա էլ փոքր չեմ, մեծ մարդ եմ արդեն, ես չեմ ուզում առջևում նստել:
Տղան բարձրացրեց գլուխը, նայեց նրա մրոտ քթին ու ծիծաղեց:
- Լսիր, մեծ մարդ, - ասաց նա: - Դու ավելի լավ է գնա քթիդ մուրը մաքրի, թե չէ հայրիկդ մի լավ կհասցնի դրա համար:
Փոքրիկը ոտքի կանգնեց, թևքով սրբեց քիթը, բայց մաքրելու փոխարեն մուրն ավելի տարածեց դեմքի վրա: Հենց այդ միջոցին նա լսեց երեխաների ուրախ ծիծաղը:
- Վա՜յ, - հրճվալից բացականչեց նա. - կինո է ցույց տալիս:
- Ո՞վ:
- Գրող քեռին:
- Նա լավ պատմվածքներ է գրում, - ասաց տղան: Փոքրիկը պոկվեց տեղից ու շնչակտուր վազեց դեպի գրողի պատշգամբը:
Պատշգամբի ծայրին սավան էր փակցված: Սավանի առջև նստել էին բակի երեխաները, այնտեղ էին նաև Մարկոսն ու Շեկոն: Փոքրիկը ճաղի վրայից շտապով ցած գցեց իրեն ու տեղ գրավեց նրանց կողքին:
Կինոապարատին փոխարինում էր երիտասարդ գրողը, որը կանգնել էր երեխաների ետևում և ոգևորված կարդում էր իր սցենարը: Եվ թեպետ պատշգամբում արև էր, և սպիտակ սավանի վրա ոչ մի պատկեր չկար, բայց երեխաները բերանները բաց, ակնապիշ նայում էին սավանին ու տեսնում ամեն ինչ, նույնիսկ ավելին, քան գրողն էր կարդում:
- Դե, ինչպե՞ս է, - հարցրեց գրողը՝ մի պահ ընդհատելով:
- Շատ լավ է, - միաբերան բացականչեցին «հանդիսականները»՝ հայացքները սավանից չկտրելով:
- Հետո ի՞նչ եղավ, - անհամբեր հարցրեց մեկը:
- Սո՛ւս, մի՛ խանգարի, - սաստեց նրան Մարկոսը:
- Շարունակիր, քեռի, ինչ կլինի, շարունակիր, - աղերսագին ասաց Փոքրիկը:
Գրողը շարունակեց...
Թեպետ հանդիսականները մի քանի հոգի էին, և թեպետ նրանց առջև սպիտակ սավանն էր միայն, բայց այդ պահին երիտասարդ գրողին թվում էր, որ իր գործը բոլորն են տեսնում, բոլորը...
Խաղողի վազեր աճեցնող հարևանը բահը ձեռքին կանգնել էր նրա պատշգամբի մոտ ու բեղի տակ ժպտալով նայում էր մերթ սպիտակ սավանին, մերթ կլանված երեխաներին, մերթ էլ գրողին: Նայում էր ու երանությամբ մտածում. «Մի՞թե մարդ կարող է այսպես խենթի նման սիրել իր գործը և այսպես ոգևորվել, վերանալ աշխարհից»:
Երիտասարդ գրողը հանկարծ նկատեց նրան, ժպտաց:
- Դե, գիտեք, ես պարզապես...
- Հասկանում եմ, տղաս, դու քո գործին նայիր, - ասաց խաղողի վազեր աճեցնող հարևանը:
Հենց այդ միջոցին պատշգամբի առջևով անցնում էր առանձնատան տերը: Նա մի պահ կանգնեց, քմծիծաղով դիտեց այս ամբողջ տեսարանը և դառնալով խաղողի վազեր աճեցնող հարևանին, ասաց.

- Զարմանում եմ, ինչի՞ համար է այս բոլորը: Ի՞նչ է ցուցադրում: Ի՞նչ են տեսնում նրանք այդ դատարկ սավանի վրա:
- Շատ բան, - պատասխանեց խաղողի վազեր աճեցնող հարևանը:
- Անմտությունից բացի ես ոչինչ չեմ տեսնում, - ասաց առանձնատան տերը՝ ուսերը վեր քաշելով:
- Դա ճիշտ է: Դուք ոչինչ չեք տեսնում, - ասաց խաղողի վազեր աճեցնող հարևանը և երեխաներին ցույց տալով, ավելացրեց: - Իսկ նրանք տեսնում են: Նրանք ամեն ինչ տեսնում են...
- Իզուր չեն ասում, որ ով սկսում է գրել...
Առանձնատան տերը մատով իր գլխի վրա խանգարվելու նշան արեց ու գնաց:
Գրողը նկատեց այդ ու վրդովված դարձավ խաղողի վազեր աճեցնող հարևանին.
- Այ, հենց սրա նմաններն են, որ չեն տեսնում իմ գործը: Սրա նմաններն են, որ իրենցից բացի ոչինչ չեն ուզում տեսնել:
- Ոչինչ, տղաս, մարդիկ կան տեսնում են, մարդիկ կան չեն տեսնում, մարդիկ էլ կան՝ չտեսնելու են տալիս:
- Այո, - դառնությամբ հաստատեց գրողը, - մարդիկ էլ կան՝ չտեսնելու են տալիս:
- Բա ոնց գիտես, որդի, մեծ աշխարհ է... Դու քո գործին նայիր: - Նա մի պահ լռեց, երանությամբ նայեց պատշգամբի տակ աճած խաղողի վազերին ու ավելացրեց, - այ, նայիր, ոնց են տերևակալել: Կմեծանան, մի քանի տարուց հետո բերք կտան, առաջին հարկի ապրողները կուտեն: Հետո էլի կբարձրանան, երկրորդ հարկում էլ կուտեն, նույնիսկ իրենց հյուրերին էլ կուտեցնեն: Իսկ հետո կհասնի ինձ՝ լավ, չի հասնի՝ ոչինչ... Ես էն աշխարհում էլ գոհ կլինեմ, երբ մարդիկ կուտեն իմ ձեռքով աճեցրած խաղողը:
«Ես էն աշխարհում էլ գոհ կլինեմ, - կրկնեց գրողը մտքում, - երբ մարդիկ կուտեն իմ ձեռքով աճեցրած խաղողը...»:
- Հրաշալի ասացիք: Դուք ուղղակի սքանչելի ասացիք, - ոգևորված բացականչեց նա և ուրախ դիմեց երեխաներին. - դե, հերոսներ, այսօր այսքանը...
- Ինչ կլինի, էլի ցույց տվեք, - աղմկեցին երեխաները:
- Շարունակությունը մի ուրիշ անգամ, - ասաց գրողը՝ սավանը պատից պոկելով:
Երեխաները պատշգամբի ճաղի վրայից թռան բակ, Փոքրիկն էլ նրանց ետևից:
Բայց ահա հոգնաբեկ քայլերով բակ մտավ հինգերորդ հարկում ապրող ձեռնափայտով ծերունին: Նա թուլացած ընկավ նստարանին ու ձեռքը կրծքին դնելով, սկսեց հևալ: Փոքրիկի ժպտուն հայացքը միանգամից փոխվեց, դարձավ կարեկցող ու տանջալից:
- Ի՞նչ եղավ քեզ, պապիկ, - բացականչեց նա ու վազեց դեպի ծերունին: - Ուզո՞ւմ ես գնամ, ջուր բերեմ...
- Ոչ, ոչ, շնորհակալ եմ, տղաս: Ոչինչ, կանցնի: - Եվ քմծիծաղ տալով ավելացրեց, - հարթ ասֆալտի վրա էլ արդեն չեմ կարողանում քայլել...
- Բա ո՞նց պետք է տուն բարձրանաս:
- Շնչելով ու արտաշնչելով, տղաս, շնչելով ու արտաշնչելով...
Տղան, ոչինչ չհասկանալով, վեր քաշեց ուսերը և հենց այդ պահին նկատեց փոստատարին, որ երեխաներով շրջապատված դուրս եկավ շքամուտքից:
- Ինձ էլ... Ինձ էլ...- աղմկում էին երեխաները:
Փոքրիկը գլխապատառ վազեց դեպի փոստատարը, որը մի կերպ ազատվելով իրեն հետապնդող երեխաներից, քայլերն ուղղեց մոտակա մուտքը:
- Քեռի փոստատար... Քեռի փոստատար... - ձայն տվեց Փոքրիկը:
Փոստատարը շրջվեց:

- Ա՛, դո՞ւ ես:
- Ես եմ, չկա՞, - հարցրեց տղան ձեռքի ափը պարզելով փոստատարին:
- Աչքներս լույս, եթե դու էլ սկսեցիր նամականիշեր հավաքել, աշխարհի բոլոր ծրարներն առանց նամականիշերի կմնան:
- Լավ էլի, քեռի փոստատար, մենակ մի հատ, հա՞...
- Այ տղա, քեզ ասացին, չկա: Ինչ ունեի չունեի բաժանեցի, քեզ էլ մյուս անգամ...
Բառերը հանկարծ ծեփվեցին նրա կոկորդում: Բակի խորքից գալիս էր երկրորդ հարկում ապրող պառավ կինը՝ բանջարեղենով լի ցանցը ձեռքին:
Փոստատարը միշտ էլ աշխատում էր չհանդիպել այդ ալեհեր կնոջը: Իսկ երբ հանդիպում էր, չէր իմանում ուր փախչի: Սիրտը կուչ էր գալիս, ինչ-որ բան կապարի նման ծանրանում էր հոգու վրա: Կինն այնպիսի հայացքով էր նայում փոստատարին, կարծես ուզում էր հարցնել. «Նամակ, հեռագիր չկա՞...»:
Տարիներ են անցել, բայց նա դեռ սպասում է: Սպասում է ու չի հավատում, որ չկա պատերազմում զոհված իր որդին:
Ամեն օր գրասեղանի արկղից հանում է տղայի խունացած նամակները, կամ երկյուղածությամբ բաց անում անկյունում դրված դաշնամուրը, որի ստեղների վրայով մի ժամանակ սահել էին որդու մատները:
- Դե լավ, ինձ մի զբաղեցրու, Փոքրիկ, ես դեռ շատ նամակներ ու թերթեր պիտի բաժանեմ, - շտապով վրա տվեց փոստատարը, ետ դարձավ ու գնաց հակառակ ուղղությամբ: Բայց դեռ մի քանի քայլ չէր արել, երբ կինը ետևից ձայն տվեց.
- Սպասիր, տղաս:
Փոստատարը մեխվեց տեղում:
- Բարև ձեզ, մայրիկ, ինչպե՞ս եք, - հարցրեց նա՝ շփոթմունքն ու հուզմունքը մի կերպ թաքցնելով:
- Շնորհակալ եմ, տղաս, դու ինչպե՞ս ես:
- Ինչպես տեսնում եք, մայրիկ, էլի թերթեր, նամակներ
- Աշխատանքդ շատ է, շարունակ դեսուդեն ես վազվզում, հոգնում ես:
- Էլ առաջվանը չի, մայրիկ, տարիներն իրենց գործը տեսնում են:
- Իսկ դու իմ հին տան դիմացի ընկուզենին հիշո՞ւմ ես:
- Հիշում եմ, ինչպես չէ, - կմկմաց փոստատարը:
- Տան տեղը հիմա կինոյի շենք են կառուցել: Իսկ ընկուզենին մնում է. մի տեսնես ոնց է մեծացել... Մեկ-մեկ գնում, կանգնում, նայում եմ ընկուզենուն, մտաբերում եմ հին բակը, բակավորներին... Հա, տղաս, - հանկարծ ինչ-որ բան հիշելով ավելացրեց նա: - Գիտես, իմ հին բակավորներից մեկը լուր է ստացել իր զոհված որդուց: Բանից պարզվում է, որ որդին ողջ է...
- Պատահում է, մայրիկ, - շշնջաց փոստատարը, - այդպես էլ է պատահում:
- Մի քանի օր առաջ, - շարունակեց կինը, - նրա դաշնամուրը լարել տվեցի:
- Այո, տարիներ են անցել...
- Տարին անցնող է. տարին կանցնի, իսկ ընկուզենին կմնա, մեծացել է, շատ է մեծացել, - ու գրեթե անլսելի ավելացրեց: - Ընկուզենին նրա տարիքին է...
Փոքրիկը, որ մինչ այդ բերանը բաց ուշադիր լսում էր նրանց խոսակցությունը, ինքնաբերաբար հարցրեց.
- Նա հիմա քանի՞ տարեկան է, տատի:
Կնոջ դեմքը միանգամից պայծառացավ, աչքերն անսովոր փայլեցին: Նա Փոքրիկի գլուխը կրծքին սեղմեց և հուզված դարձավ փոստատարին.

- Դու լսեցի՞ր ինչ ասաց, լսեցի՞ր... Այ, ես էլ այս Փոքրիկի պես եմ: Ես երբեք չեմ մտածում, թե նա քանի տարեկան կլիներ: Ես միշտ մտածում եմ, թե նա հիմա քանի տարեկան է...
- Դուք էլի սպասում եք...
- Հապա ինչպե՞ս: Ուրիշ էլ ինչպե՞ս...
Փոստատարը լռեց:
- Դե լավ, տղաս, ես քեզ շատ զբաղեցրի, գործից գցեցի:
- Ինչ եք ասում, մայրիկ, - շփոթված պատասխանեց փոստատարը:
- Դե ես գնամ: Թե որ հանկարծ նամակ կամ հեռագիր լինի, փոստարկղը չգցես, ուղղակի ինձ տուր: Թե որ տանն էլ չլինեմ, պահիր, հետո կտաս, մենակ թե փոստարկղը չգցես: Ցտեսություն, տղաս, - ասաց կինը, համբուրեց Փոքրիկին ու գնաց:
Փոստատարը, որ արձանացած նայում էր նրա ետևից, մոտեցավ պատի տակ դրված նստարանին, նստեց և հազիվ լսելի ձայնով ասաց.
- Տեսնո՞ւմ ես, ինչ դժվար բան է փոստատար լինելը: Իսկ դու՝ մի գլուխ նամականիշ, հա նամականիշ... Կարծում ես իմ գործը մենակ գույնզգույն նամականիշերով ծրարներ բաժանե՞լն է: Էհ, ասենք դու ինչ ես հասկանում... Կյանքը քեզ համար դեռ մի փակ ծրար է՝ գույնզգույն նամականիշերով զարդարված... - նա մի պահ լռեց, ապա մտասույզ հայացքը մի կետի հառած, խանձված ձայնով ավելացրեց. - քսան տարի է անցել, բայց էլի սպասում է: Նա այնպիսի հավատով է նայում ինձ, որ թվում է՝ նրա որդին ողջ է: Թվում է՝ պատերազմում զոհված բոլոր որդիներն էլ ողջ են, որ աշխարհում ոչ մի որդի չի մեռնում: Իսկ ես չեմ կարողանում նրա աչքին երևալ:
- Ինչի՞ համար, քեռի:
- Ախր նրա որդու սև թուղթը ես եմ բերել, այ էս կոտրած ձեռքով:
- Սև թուղթն ի՞նչ է, քեռի, - հարցրեց տղան:
- Լավ է, որ չգիտես: Լավ է, որ երբեք էլ չիմանաս...
Եվ թեպետ փոստատարն այլևս չխոսեց «սև թղթի» մասին, այնուամենայնիվ, Փոքրիկը հասկացավ, որ դա վատ բան է, շատ վատ:
- Իսկ քո ձեռքն ո՞վ է կոտրել, քեռի, - հարցրեց Փոքրիկը՝ հայացքը չկտրելով նրա պրոտեզե ձեռքից:
- Պատերազմը... - հառաչեց փոստատարն ու աչքերը սևեռեց մի կետի: - Թե որ հանկարծ նամակ կամ հեռագիր լինի... - կրկնեց նա կնոջ խոսքերը ու դարձավ տղային: - Դե տեսնում ես, սպասում է, լուր է ուզում ստանալ իր որդուց: Բայց որտեղի՞ց... Դե արի ու պատասխան տուր: Ի՞նչ պատասխանեմ: Ասա տեսնեմ, ի՞նչ ասեմ նրան...
- Ասա՝ կլինի, - միամտորեն վրա բերեց Փոքրիկը:
- Չէ, չէ, խաբել պետք չի: Խաբելը լավ բան չի...
- Չէ, քեռի փոստատար, մի խաբի... Ասա, կլինի...
Փոստատարը նայեց տղային: Յոթ տարեկան տղայի այդ պարզ, առաջին հայացքից միամիտ թվացող խոսքի մեջ նա հանկարծ շատ բան տեսավ... Նա մարդկանց լրագրեր, հեռագրեր, նամակներ է բաժանում, որոնց մեջ և՛ ուրախություն կա, և՛ տխրություն: Մարդիկ սպասում են իրեն անհամբերությամբ, սպասում են հույսով, հավատով, ուրախ լուրի են սպասում: Եվ նա մարդկանց չպետք է ասի՝ «չկա»: Պետք է ասի՝ «կա»: Իսկ թե կյանքը երբեմն հնարավորություն չի տալիս, ապա գոնե պետք է ասել «կլինի...»:
Նա շտապով բաց արեց պայուսակը և սկսեց ծրարներ հանել: Հուզմունքից ձեռքը դողում էր: Նա ծրարների վրայից արագ-արագ պոկում էր գույնզգույն նամականիշերն ու տալիս տղային:

- Բռնիր, սա՝ եգիպտական է... Սա՝ ֆրանսիական... Սա՝ իտալական: Սա... Սա... Սա... - իրար ետևից հուզված թվարկում էր նա, նամականիշերը դնելով տղայի ափի մեջ: Հետո ոտքի կանգնեց, թվաց, թե միանգամից հոգնածությունն անցավ: Թվաց, թե ուսից կախված ծանր պայուսակը դարձավ թեթև, շատ թեթև: Նա ձեռքի ափով թփթփացրեց Փոքրիկի այտին ու գնաց: Գնաց այնպես թեթևացած, ասես աշխարհի բոլոր ուրախ լուրերն էր տանում իր պայուսակում:
Տղան մի անգամ էլ նայեց բռի մեջ հավաքված նամականիշերին և ուրախ վազեց դեպի իրենց շքամուտքը: Նա վեր սլացավ աստիճաններով (տանում էր նամականիշերը Շեկոյին ցույց տալու), բայց չորրորդ հարկի ոլորանում հանդիպեց ձեռնափայտով ծերուկին, որը դեռ տեղ չէր հասել:
- Տե՛ս, - հրճվալից բացականչեց Փոքրիկը:
Ծերունին կանգնեց, նայեց սպայի ձեռքին: Նրա դեմքին հայտնվեց հոգնած մի ժպիտ:
- Օ՛, ինչքան էլ շատ են. գրեթե մի ամբողջ աշխարհ կա քո ափի մեջ, - հևալով ասաց նա ու նորից սկսեց վեր բարձրանալ:
Տղան աչքերը լայն բացած նայեց նրա ետևից:
Ծերունին ամեն մի աստիճան փոխելիս կանգնում, թաշկինակով սրբում էր ճակատի քրտինքը և նորից շարունակում.
- Թըխկ... Թըխկ... Թըխկ...
Աստիճաններն ասես տնքում էին նրա ձեռնափայտի տակ: Ավելի ճիշտ՝ ձեռնափայտն էր տնքում, որովհետև աստիճանները նոր էին, իսկ ձեռնափայտն ու իր տերը՝ հին և հոգնած:
- Ձեռքդ տուր, պապի, - ասաց Փոքրիկը՝ օգնության հասնելով նրան:
- Ոչ, ոչ, դու կախ կընկնես իմ ձեռքից: Տեսնում ես՝ իմ ձեռնափայտն էլ հազիվ եմ ինձ հետ տանում:
- Ներքևի հարկում ապրի, պապիկ, ներքևում աստիճաններ չկան:
- Շուտով, տղաս, շուտով... Այ, առաջին հարկի ընտանիքը նոր բնակարան է տեղափոխվելու: Ինձ ասացին, որ դիմում գրեմ: Ասացին, որ իրենց բնակարանն իջնեմ: Դե ես էլ դիմել եմ, կիջնեմ, թե որ չիջնեմ էլ, ոչինչ, հինգերորդ հարկից մինչև երկինք երկու քայլ է միայն, - ասաց ծերունին ու ձեռնափայտն աստիճաններին տկտկացնելով սկսեց վեր բարձրանալ:

3

Անցել էին օրեր:
Կեսօր էր:
Թեպետ աշուն էր արդեն, բայց պատշգամբը լցվել էր արևով՝ տաք. կիզիչ արևով:
Պատշգամբի սալաքարերի վրա թաց մարմնով պառկել էր Փոքրիկը՝ հոր ծղոտե լայնեզր գլխարկն աչքերին քաշած: Արևից տաքացած սալաքարերը ջերմացնում էին տղայի մերկ մարմինը և հաճելի խուտուտ տալիս:
Հանկարծ ջրի մի քանի սառը կաթիլ ընկան նրա մեջքին: Տղան սարսռած ոտքի թռավ ու սկսեց քրքջալ:
Պատշգամբում կանգնած էր հայրը՝ մի մեծ, գունավոր փուչիկ ձեռքին:
Տղան ուրախ առաջ նետվեց, բայց հայրը բաց թողեց թելի ծայրը. և փուչիկը ցած իջնելու փոխարեն դանդաղ վեր բարձրացավ ու կպավ պատշգամբի առաստաղին:
- Վա՛յ, - հրճվանքով ճչաց Փոքրիկն ու սկսեց թռչկոտել կանգնած տեղում:
Փուչիկն առաստաղի տակ դեսուդեն էր օրորվում:
- Իջեցրու, - տագնապով ասաց տղան: - Հիմի կգնա, կկորչի...
Հայրը ոտքի թաթերին կանգնելով բռնեց օդում կախված թելի ծայրից, փուչիկը ցած բերեց ու ասաց.

- Այ, մենք հիմա սրան կկապենք մի երկար թելից ու բաց կթողնենք, և քո փուչիկը կթռչի, կսլանա հեռո՛ւ, հեռո՛ւ...
- Մինչև ո՞ւր:
- Մինչև ամպերը:
- Ո՛ւխ, - ոգևորված բացականչեց տղան:
- Պահարանի դարակում հաստ թելի կծիկ կա, բեր...
Փոքրիկը գլխապատառ ներս գցեց իրեն՝ թաց ոտնահետները թողնելով սենյակի հատակին: Իսկ այդ պահին նրանց պատշգամբի առջևով շնչակտուր անցնում էին ձեռնափայտով ծերուկն ու նրա կինը:
- Շտապիր, այ մարդ, նրանք տեղափոխվում են արդեն, շտապիր, - անհանգիստ կրկնում էր կինը:
- Կհասցնենք, ինչ ես իրար խառնվել, կհասցնենք...
- Ա՛խ, քո դանդաղկոտությունը... Ա՛խ, քո անտարբերությունը...
Փոքրիկը պատշգամբ վազեց՝ թելի հաստ կծիկը ձեռքին:
- Վերցրու, հայրիկ, մենակ ամուր կապի, հանկարծ չպոկվի...
- Չի պոկվի, - ասաց հայրը՝ թելի ծայրը կապելով փուչիկից: «Այ, եթե փուչիկը ավելի մեծ լիներ, շատ մեծ, - մտածում էր տղան, - երկու ձեռքով կկախվեի նրանից ու կբարձրանայի վեր, մինչև ամպերը... Հետո կսլանայի շենքերի վրայով, քաղաքի վրայով, ամբողջ աշխարհի վրայով: Մարդիկ զարմացած կնայեին, իսկ ես երկնքից ձեռքով կանեի նրանց...»:
Եվ մինչ Փոքրիկը, իր գունավոր երազանքից կախված, մտովի սլանում էր ամպերի վրայով, հանկարծ փուչիկը դիպավ հոր ձեռքի վառված ծխախոտին և ուժգին ճայթյունով պայթեց:
Հայր ու տղա իրար նայեցին: Հայրը՝ մեղավոր ու շփոթված, իսկ տղան՝ այլայլված ու սարսափով:
- Ի՛նչ արեցիր, հը՞, ի՞նչ արեցիր...
- Դե լավ, լաց մի լինի, նորը կառնեմ:
- Չեմ ուզում, - լալիս էր տղան, - ես իմ փուչիկն եմ ուզում...
Եվ որքան էլ հայրը կրկնում էր, որ կգնա, էլի կբերի՝ ավելի մեծը, ավելի լավը, տղան չէր լսում:
- Պայթեց... էլ ոնց կլիներ, կարծես աշխարհ պայթեց... Ինչի՞ ես լալիս, այ տղա, մի փուչիկի համա՞ր...
Բայց տղան չէր հանգստանում, լալիս Էր: Նա լալիս էր մեծ, շատ ավելի մեծ բանի համար, քան փուչիկն էր:
- Քեզ ասացին ավելի լավը կառնեմ, հենց այսօր, - ասաց հայրն ու ներս մտավ:
Փոքրիկը պատշգամբում կանգնած դեռ լալիս Էր, երբ հանկարծ...
- Դանակ-մկրա՛տ սրեմ, դանակ-մկրա՛տ...
Փոքրիկը բարձրացրեց-գլուխը: Նրա թարթիչներից կախված արտասուքի կաթիլները թրթռացին և, ընկնելով այտերին, հոսեցին դանդաղ: Տղան բռունցքներով մաքրեց այտերի արտասուքը, ժպտաց և պատշգամբի ճաղի վրայից թռավ բակ:
Բակում՝ պատի տակ դրված նստարանի մոտ կանգնել էր Ծերունին, բայց դանակ-մկրատ սրող մեքենայի փոխարեն նա երեխայի մի գեղեցիկ սայլակ էր բռնել, փոխվել էր և հագուստը: Փոքրիկը մի պահ վարանած նայեց նրան, կարծես առաջին անգամն էր տեսնում, նայեց երեխայի սայլակին, ապա շփոթված մոտեցավ:
- Սա ո՞վ է, - հարցրեց նա՝ սայլակում քնած երեխային ցույց տալով:
- Թոռնիկս է, երկու ամիս է արդեն, ինչ աշխարհ է եկել, - ասաց Ծերունին և բարձրացրեց տղայի աչքերն ընկած մեծ գլխարկը: - Մեծացել, մեծ մարդ ես դարձել... Դե ասա տեսնեմ, ո՞նց ես:

- Լավ եմ, դո՞ւ ոնց ես, - հարցրեց տղան՝ նայելով Ծերունու ուսին:
Ծերունին, կռահելով նրա հայացքի իմաստը, քթի տակ ժպտաց:
- Էլ դանակ-մկրատ չեմ սրում, թոռնիկովս եմ զբաղված: Ես հենց էնպես կանչեցի, որդի, որ իմանաս եկել եմ... որ իմանաս՝ շատ եմ կարոտել քեզ, - ասաց նա և սայլակից կախ ընկած մրգերով լի փոքրիկ զամբյուղը տվեց տղային: - Վերցրու: Իմ այգուց է, քո բաժինն եմ բերել...
Փոքրիկը զամբյուղից մի մեծ խնձոր հանեց, հետո ցույց տալով սայլակում քնած երեխային, ասաց.
- Բա սրա՞ն:
- Դու կեր, որդի, նա դեռ փոքր է: Որ մեծանա նա էլ կուտի:
Ծերունին նստեց ու մոտ քաշեց սայլակը: Սայլակում պառկած երեխան ժպտաց քնի մեջ: Տղան նկատեց այդ ու դարձավ Ծերունուն:
- Վա՛յ, ծիծաղում է:
- Քնի մեջ է:
- Նա երազ տեսնո՞ւմ է:
- Երազ բոլորն են տեսնում, որդի: Մարդ ասածդ տարիներով քնած է լինում ու մենակ մի անգամ է երազ տեսնում: Հետո էլի տարիներով քնում է, բայց էլ երբեք երազ չի տեսնում:
- Ես տեսնում եմ, - ոգևորված բացականչեց տղան: - Ես միշտ լավ երազներ եմ տեսնում:
- Դու և սա պետք է որ լավ երազ տեսնեք:
- Բա դո՞ւ:
- Երեկ գիշեր, - երանելի մի ժպիտով ասաց Տերունին, - երազումս մի սիրուն, մի նախշուն նավակ նստած գնում էի: Չէի գնում, ջուրը տանում էր ինձ:
- Բա ես քեզ հետ չէի՞:
- Չէ, որդի, դու ինձ հետ չէիր: Դու կանգնած էիր ափին, կանաչների մեջ ու ձեռքով կանչում էիր ինձ: Էդ ես էի ուզում քեզ մոտ գալ, բայց չէի կարողանում, ջուրը քշում, տանում էր...
- Իսկ վատ երազ լինո՞ւմ է, - հարցրեց տղան՝ նստելով նրա կողքին:
- Լինում է, նայած ում ինչ է բաժին ընկնում:
- Բաժի՞ն, - զարմանքով ծոր տվեց տղան: - Իսկ ո՞վ է բաժանում այդ երազները:
- Սպիտակամորուք մի ծերունի:
- Քեզ նմա՞ն:
Վարպետը ժպտաց, հանեց քթախոտի տուփը և մի քանի անգամ քիթը քաշեց ժանգագույն փոշին:
- Իսկ որտե՞ղ է ապրում երազներ բաժանող այդ պապիկը:
- Էնտեղ, վերևում...
Փոքրիկը նայեց նրա ցույց տված ուղղությամբ: Հենց այդ պահին փշալարերով ցանկապատված բակից դուրս եկավ առանձնատան տերը: Ծերունին մի հայացք գցեց նրա ետևից ու մտազբաղ ավելացրեց.
- Վերևից աշխարհը լավ է երևում: Վերևից բոլորը լավն են երևում:
Սայլակում քնած երեխան շարժվեց, ծմրկտաց ու բաց արեց աչքերը:
Ծերունին ոտքի ելավ:
- Դե, ես գնամ, որդի:
- Ո՞ւր ես գնում, - տագնապով հարցրեց տղան:
- Տանեմ մի քիչ ման տամ:
- Ես էլ գա՞մ:
- Թե որ ձերոնք թողնեն, արի:

- Ես հիմա... Չգնաս, հա՞, ես հիմա կգամ, - ասաց Փոքրիկն ու մրգով լի զամբյուղը ձեռքին վազեց տուն:
Շքամուտքից դուրս թռավ Մարկոսը և հայացքը ուղղելով չորրորդ հարկի պատշգամբին, որքան ուժ կար կոկորդում, կանչեց.
- Շեկո՛, հեյ, Շեկո՛...
- Այ տղա, Մարկո՛ս, - ներսից շարունակ ձայն էր տալիս մայրը, - ի՞նչ ես էդտեղ ցցվել: Ներս արի, հիմի ուր որ է մեքենան կգա:
- Գալիս եմ, մայրիկ: Տո էս Շեկոն ի՞նչ եղավ, է... - փնթփնթաց Մարկոսն ու նորից սկսեց կանչել. - Շեկո՛... Շեկո՛...
Վերջապես չորրորդ հարկի պատշգամբից դուրս ցցվեց Շեկոն՝ մի մեծ վարունգ ձեռքին:
- Ի՞նչ է, - լիքը բերանով հարցրեց նա.
- Շուտ ցած իջիր... Վազիր, ինչ ես կանգնել...
- Ի՞նչ է եղել:
- Տեղափոխվում ենք:
- Արդե՞ն... - ճչաց Շեկոն ու իսկույն չքացավ պատշգամբից:
... Բակ ելավ և Փոքրիկը: Նա գլխապատառ վազեց դեպի Ծերունին:
- Գնանք...
- Արի շորերդ հագիր նոր... - պատշգամբից ձայն տվեց հայրը ու գլխի շարժումով հարգալից բարևեց Ծերունուն:
- Ոչինչ, հեռու չեմ տանում, - ասաց Ծերունին: - Շուտ կբերեմ, արև է, չի մրսի:
Եվ ահա երեխայի անիվավոր սայլակից բռնած քայլում են նրանք բակով: Քայլում են կողք կողքի, իրարից հեռու և միաժամանակ այնքան մոտ ու հարազատ երկու հասակներ՝ յոթանասունամյա ծերունին և ոտաբոբիկ, հոր ծղոտե գլխարկն աչքերը քաշած յոթ տարեկան տղան:
Կիսամութ դալանով նրանք դուրս եկան փողոց:
- Արի այգի գնանք, հա՞, - ասաց Փոքրիկը:
- Գնանք, - համաձայնեց Ծերունին:
Երեխայի սայլակից բռնած՝ նրանք ցած իջան փողոցով:
Ահա և այգին:
Ներս մտան:
Աջակողմյան հրապարակում պտտվում էր սարսափելի օղակը: Ցանցապատ խցիկներում նստած երեխաներն աղմկում էին, ծիծաղում: Տղան երանությամբ նայում էր նրանց:
- Հը, կնստե՞ս, - հարցրեց Ծերունին: Փոքրիկը ժպտաց:
Ծերունին մոտեցավ դրամարկղին ու տոմսակ վերցրեց:
- Գնա նստիր, - ասաց նա՝ տոմսակը տալով Փոքրիկին: - Բայց տես, հա, օյիններ չսարքես օդի մեջ:
- Բա դո՞ւ:
- Ես էստեղից կնայեմ:
- Արի դու էլ պտտվիր:
- Չէ. որդի, ես գետնի վրա կանգնած էլ պտտվում եմ:
...Մետաղյա հսկա անիվն աստիճանաբար դանդաղեցրեց պտույտը, կանգ առավ: Փոքրիկը դուրս թռավ ցանցապատ խցիկից ու վազեց դեպի Ծերունին:
- Հը, ո՞նց էր:
- Այ թե պտտվում էր, հա՛... Մեկ իջնում էր ցած մեկ էլ բարձրանում էր, բարձր, ծառերից էլ բարձր...

- Չվախեցա՞ր:
- Չվախեցա: Բայց որ ճռռում էր, մի քիչ վախենում էի, կարծում էի՝ հիմա կպոկվի:
Նրանք քայլեցին այգու ծառուղիներով, տաղավարում պաղպաղակ կերան և այն է պատրաստվում էին դուրս գալ այգուց, երբ Փոքրիկը ցույց տվեց կողքի շինությունն ու ասաց.
- Արի հիմա էլ ծիծաղի սենյակ գնանք, հա՞:
- Չէ, որդի, դու գնա, - ասաց ծերունի վարպետը՝ ձեռքը գրպանը տանելով: - Առ, քեզ համար տոմս վերցրու, ներս գնա: Ես քեզ էստեղ կսպասեմ...
- Արի դու էլ ծիծաղիր, այստեղ բոլորն էլ ծիծաղում են... Երկար խնդրեց Փոքրիկը: Ծերունին ստիպված համաձայնեց և երեխայի սայլակից հրելով՝ ներս գնաց:
Սրահը լեփ-լեցուն էր մարդկանցով: Ինչպես միշտ, այստեղ հավաքվել էին ավելի շատ մեծերը, քան փոքրերը: Նրանք կանգնել էին հայելիների առջև, լուռ ու անտարբեր նայում էին իրենց ծռմռված կերպարանքներին ու ժպտում:
Փոքրիկը մոտեցավ հայելիներից մեկին ու սկսեց ծիծաղել: Հետո մոտեցավ մի ուրիշ հայելու: Հետո՝ երրորդին, չորրորդին... Նա մեկ բարակում էր, մեկ հաստանում, մեկ երկարում, մեկ կարճանում ու ծիծաղում էր: Ծիծաղում էր ինչքան ուժ կար թոքերում: Այդ պահին նրա համար աշխարհը ծիծաղի սենյակ էր՝ զարմանալի ու ծուռումուռ հայելիներով լցված:
Տղան հայելու մեջ նկատեց սրահի անկյունում կանգնած Ծերունուն, որը երեխայի սայլակից բռնած շուրջն էր նայում: Ծերուկն ու սայլակը փոքրացել, կպել էին հատակին: Տղային մի պահ թվաց, թե իր կանաչամորուք թզուկն է կանգնել այնտեղ ու ժպտալով ձեռքով է անում իրեն: Նա հայացքը հայելուց չկտրելով ետ-ետ գնաց ու կանգնեց նրա կողքին, փոքրացավ, կպավ գետնին:
Տղան ու Ծերունին սկսեցին ծիծաղել, և հանկարծ...
Ծիծաղի սենյակը լցվեց երեխայի լացով: Մարդիկ հանկարծակիի եկած շուռ եկան: Սայլակում պառկած երեխան արթնացել ու լալիս էր:
- Տեղ գտավ լաց լինելու, - տրտնջաց Ծերունին ու դառնալով տղային, ավելացրեց: - Դե, որդի, գնացինք...
- Մի քիչ էլ մնանք, հա՞:
- Տեսնում ես՝ ձենը գլուխն է գցել: Մինչև տուն հասցնեմ հոգիս կհանի:
- Տանենք հայելու մոտ, թող նայի ու ծիծաղի, - գյուտ արածի պես բացականչեց տղան:
- Չէ որդի, չի ծիծաղի: Նա ուտել է ուզում:
- Ծծակը բերանին է:
- Սրանով փոր չես կշտացնի, գնանք...
Նրանք դուրս եկան այգուց և քայլերն ուղղեցին դեպի Փոքրիկենց բակը:
- Դե, որդի, մնաս բարով:
- Գնո՞ւմ ես:
- Գնում եմ: Դու էլ գնա: Հայրիկդ հիմա քեզ է սպասում: Ես էլ սրան պետք է տուն հասցնեմ:
- Ես էլ գա՞մ:
- Մի ուրիշ անգամ, - ասաց Ծերունին, համբուրելով Փոքրիկի ճակատը: - Մեկ էլ որ եկա՝ քեզ հետս կտանեմ...
- Այ կգաս, հա՛, կսպասեմ...
- Սպասիր, անպայման կգամ, - ասաց Ծերունին ու թոռան սայլակը հրելով, գնաց:
Փոքրիկը բակ մտավ:
Բակում կանգնած էր կահ-կարասիներով բեռնված ավտոմեքենան: Մեքենայում, տան իրերի վրա նստել էր Մարկոսը՝ ֆիկուսի ծաղկամանը գրկած: Մարկոսի կողքին, մի մեծ կապոց ծնկներին, պպզել էր նրա անբաժան ընկերը՝ Շեկոն:

- Դե, մնացեք բարով, - ասաց Մարկոսի մայրը պատշգամբներից ցած նայող հարևաններին: Բոլորը հուզված թափահարեցին ձեռքերը:
- Մարկո՛ս, - ձայն տվեց Փոքրիկն ու վազեց դեպի ավտոմեքենան: - Ո՞ւր ես գնում:
- Նոր բնակարան:
- Մի գնա, Մարկոս: Ինչ կլինի, մեր բակից մի գնա...
- Կգամ, - ժպտաց Մարկոսը: - Ես ամեն օր կգամ: Մեքենան հռնդյունով պոկվեց տեղից:
- Մարկո՛ս, - ձայնեց Փոքրիկը, վազելով ավտոմեքենայի ետևից: - Բոլոր նամականիշերս քեզ կտամ, մենակ չխաբես, հա՞, կգաս...
Մարկոսը մռայլվեց: Ինչ-որ բան մտաբերելով նա շտապ ոտքի ելավ, ծաղկամանը դրեց մի կողմ ու սկսեց թմբկահարել վարորդի խցիկը:
- Սպասեք, սպասեք:
Մեքենան կանգ առավ:
Մարկոսը իրար վրա դարսված դարակների միջից հանեց փնտրածը և մեկնեց Փոքրիկին:
- Ոնց էի մոռացել: Վերցրու, պահել էի, որ քեզ տամ: Վերցրու, նամականիշերդ մեջը կդնես...
Տեսնելով իր թզուկների տուփը՝ Փոքրիկը հրճվալից ճչաց.
- Մարկո՛ս...
Ավտոմեքենան շարժվեց: Փոքրիկը վազեց նրա ետևից:
- Ետ դարձիր, - բղավեց Մարկոսը: - Փողոց դուրս մի գա, մեքենայի տակ կընկնես...
Ավտոմեքենան հռնդյունով դուրս եկավ շենքի բակից:
Փոքրիկն իր այնքան որոնած թզուկների հրաշալի տուփը երկու ձեռքով ամուր սեղմեց կրծքին, և նրա բոբիկ ոտքերը շտապեցին հրաշքով գտածը տուն հասցնել: Բայց շքամուտքի մոտ տղան կանգ առավ:
Բակում դրված նստարանին նստել էին ձեռնափայտով ծերուկն ու նրա կինը: Փոքրիկը մոտեցավ նրանց:
- Շուտ արեք, - ասաց նա, - իրերն իջեցնենք: Մարկոսենք արդեն գնացին:
Ծեր ամուսինները լուռ նայեցին իրար:
- Ուշացել ենք, տղաս, - հառաչելով ասաց կինը:
- Բնակարանը ինչ-որ երիտասարդի են հատկացրել, - ավելացրեց ձեռնափայտով ծերունին:
- Միայնակ երիտասարդի, - հուզված հաստատեց կինը:
- Բա դո՞ւք, - շփոթված հարցրեց տղան:
- Դե մենք ինչ... - ասաց ծերունին և, բանալով թղթի մեջ փաթաթված հացն ու երշիկը, սկսեց ուտել: - Մենք նորից պետք է վերուվար անենք աստիճաններով:
- Ոչ, սիրելիս, ոչ, - վրա տվեց կինը: - Ես այս սխալը այսպես չեմ թողնի: Ես նորից կշարունակեմ դռները բախել:
- Շարունակիր, սիրելիս, շարունակիր, - քմծիծաղ տվեց ծերունին: - Իսկ մեր դիմումի վրա մակագրողներն ավելի խելոք են գտնվել: Նրանք անպայման մտածել են. իզուր ինչո՞ւ չարչարվել, երբ հինգերորդ հարկից մինչև երկինք երկու քայլ է միայն...
Փոքրիկը շրջվեց:
Քթի տակ երգելով ու օրորվելով գալիս էր երիտասարդ գրողը; Նա հարբած էր: Դա երևում էր նրա երերուն քայլերից, մի կողմ թեքված փողկապից և թղթապանակի արանքից դուրս ցցված ցաքուցրիվ թղթերից:
Փոքրիկը սրտատրոփ ընդառաջ վազեց:
- Հը՞:
- Մերժեցին, Փոքրիկ, մերժեցին, - ձեռքը թափ տալով ասաց գրող քեռին:
- Ինչի՞ համար. - ափսոսանքով հարցրեց տղուսն:

- Չեն տեսնում... - հազիվ արտաբերեց նա: - Ոչինչ չեն տեսնում...
- Աչքեր չունե՞ն:
- Ունեն, Փոքրիկ, ունեն, բայց չեն տեսնում:
- Իսկ դու ցույց տուր, կտեսնեն:
- Պետք չի... Նրանց պետք չի... Նրանք չեն ուզում տեսնել... Այ դու տեսնում ես: Դու ամեն ինչ տեսնում ես, բայց նրանք...
Գրողը համբուրեց տղային և քթի տակ ինչ-որ երգ մռմռալով, գնաց:

4

Երեկո է: Պատշգամբը ողողվել է լուսնի կաթնագույն լույսով: Փոքրիկը պառկած է անկողնում: Նա զբաղված է իր թզուկների տուփով ու նամականիշերով: Իսկ գլխավերևում՝ պատշգամբի սյունից կապված, օրորվում է նոր գնված մեծ փուչիկը: Պատշգամբի մի անկյունում նստել է Փոքրիկի հայրը՝ ձեռքին «Սպիդոլա» ռադիոընդունիչը: Նա եռանդով դեսուդեն է պտտեցնում ռադիոընդունիչի կոճակը: Աշխարհի տարբեր ծայրերից լսվում են երգեր, ջազային երաժշտություն և տարբեր լեզուներով տրվող հաղորդումներ:
«...Փորձնական պոլիգոնում, - լսվեց հաղորդավարի ձայնը,- կատարվել է ջերմամիջուկային ստորգետնյա երկու նոր պայթեցում: Սա հերթական...»:
Հայրը վրդովված անջատեց ռադիոընդունիչը:
- Բարբարոսներ, երկրագունդն էլ մի օր կպայթեցնեն:
- Երկրագունդը հո փուչիկ չի, որ պայթի, - ասաց տղան:
- Փուչիկ... - մտասույզ կրկնեց հայրը: - Հրաշալի մի փուչիկ, միայն մեծ, շատ մեծ...
Փոքրիկը զարմացած թարթեց աչքերը:
- Ուրեմն մենք այդ մեծ փուչիկի վրա՞ ենք ապրում, - ասաց նա:
Հայրը վառեց ծխախոտն ու երկար նայեց տղային: Իսկ Փոքրիկը, որ այդ պահին բարձի վրա նամականիշերն էր շարում, դարձավ հորը.
- Հայրիկ, այ հայրիկ...
- Ի՞նչ է:
- Փոստատարը նրա տղայից լավ լուր կբերի՞:
- Ո՞ւմ տղայից:
- Երկրորդ հարկում ապրող տատիկի:
Հայրը մռայլվեց:
- Կբերի՞, - նորից հարցրեց տղան:
- Չգիտեմ:
- Իսկ պատերազմի ժամանակ զինվորները սպանվո՞ւմ են:
- Պատերազմն ամեն ինչ է սպանում, - մտախոհ ասաց նա ու ոտքի ելավ:
Բակի երեկոյան լռության մեջ լսվեց ձեռնափայտի տկտկոց: Փոքրիկը ծնկեց անկողնում և պատշգամբի ճաղին հենվելով, նայեց դուրս: Շքամուտք մտան հինգերորդ հարկում ապրող ծերուկն ու նրա կինը: Շքամուտքից լսվեց աստիճաններով վեր բարձրացող ծերունու ձեռնափայտի խուլ ընդհատումներով տկտկոցը:
- Հայրիկ...
- Ի՞նչ է:
- Հինգերորդ հարկից մինչև երկինք քանի՞ քայլ կլինի:
- Շատ, նայած թե ինչքան ես բարձրանում և ինչով:
- Ձեռնափայտով:
- Ձեռնափայտով երկինք բարձրանալ չի լինի: Հիմար բաներ մի խոսիր, քնիր...

Փոքրիկը նամականիշերը տեղավորեց տուփի մեջ. դրեց բարձի տակ ու մեջքի վրա շուռ գալով, սկսեց խաղալ գլխավերևը կախված փուչիկի հետ: Հայրը մոտեցավ, ուղղեց նրա բարձը: Տղան սարսափած մի կողմ քաշեց փուչիկը:
- Ծխախոտդ... Դու էլի կպայթեցնես իմ փուչիկը...
- Չեմ պայթեցնի, քնիր. - ասաց հայրը՝ ծխախոտը հանգցնելով:
- Հայրիկ, - նորից հարցրեց տղան, - որ երկրորդ հարկի պապիկի խաղողի ծառերը մեծանան, շատ մեծանան, երրորդ հարկ կհասնե՞ն:
- Որ տեղում թողնեն, կհասնեն:
- Իսկ եթե...
- Քեզ ասացին քնիր, ուշ է արդեն:
Տղան լռեց: Հայացքն ուղղեց երկինք և հազիվ լսելի ձայնով հարցրեց.
- Ինչքա՞ն աստղ կա երկնքում:
- Չգիտեմ, չեմ կարող հաշվել:
- Իսկ ինչի՞ չես կարող հաշվել:
- Որովհետև շատ են:
- Ինչքա՞ն շատ:
- Դե ինչպես ասեմ... Ինչքան մարդ կա երկրի վրա, այնքան էլ աստղ կա երկնքում: Ամեն մարդ մի աստղ ունի երկնքում, - կատակով ավելացրեց հայրը:
- Ուրեմն ե՞ս էլ ունեմ:
- Ունես, ունես, քնիր:
- Իսկ ո՞րն է իմ աստղը: Հայրը ժպտաց:
- Այ, այն մեծը, ամենից պայծառը:
Տղան նայեց հոր ցույց տված աստղին, նայեց մյուսներին:
- Այն մեկը, - ասաց տղան մատը վեր տնկելով, - քո աստղն է: Մյուսը՝ մայրիկի... Իսկ մնացածն էլ բոլոր մարդկանց աստղերն են: Մեկ, երկու, երեք, չորս... Չէ, չեմ կարող հաշվել: Դու էլ չես կարող, չէ՞, հայրիկ:
- Ոչ ոք չի կարող հաշվել:
- Չէ, կարող է... Դանակ-մկրատ սրող պապիկը կարող է: Նա ամեն ինչ կարող է: Նա կարող է հաշվել ինչքան աստղ կա երկնքում ու ինչքան մարդ կա երկրի վրա...
- Եթե շատ խոսես, անկողինդ պատշգամբից տուն կտանեմ:
- Չէ, չէ, տուն մի տար, քնում եմ, - ասաց Փոքրիկն ու թեքվեց կողքի:
Հայրը մարեց պատշգամբի լույսնն ու տուն մտավ-
«Պատշգամբում քնելը լավ է, - աչքերը փակ մտածեց տղան:
- Պատշգամբից երևում է երկինքը: Իսկ երկնքում աստղերն են, շա՛տ-շա՛տ, աստղերի չափ շատ»...

5

Ահա շենքի տանիքը... Հրշեջային պատուհանից տանիք է ելնում տղան ու թռչկոտելով վազում մի ծայրից մյուսը: Իսկ շուրջը ծխնելույզներն են, մրոտ, աղյուսաշար ծխնելույզներ... Ինչ լավ է տանիքի վրա, ինչ լավ է: Այստեղից ամբողջ քաղաքն է երևում, և ինչքան էլ լույսեր կան: Այ, եթե ուզի, հիմա, հենց հիմա կթափահարի ձեռքերը ու վը՛զզ... Կթռչի տանիքների վրայով, ամբողջ աշխարհի վրայով: Չէ, ավելի լավ է դեպի աստղերը թռչի... Տղան պարզում է ձեռքերը, պատրաստվում է թռչել, երբ հանկարծ երկնքի մի հատվածը լուսավորվում է, և այնտեղ, աստղերի մեջ նա տեսնում է Ծերունուն: Ահա նա կանգնել է գլուխը փոքր-ինչ առաջ թեքած, ակնոցն աչքերին, առջևը՝ անիվավոր մեքենան, բայց այս անգամ արդեն անիվը մեծ

է, շա՛տ մեծ: Անիվը պտտվում է ու ճռռում, պտտվում է ու ճըռռում: Երկինքը լցվել է ահռելի ճռռոցով:
- Է-հե-հե-հե՛յ... - ասես ձորի միջից ձայն է տալիս տղան:
Ծերունին ընդհատում է պտտելը, նայում է ցած:
- Ա՛, էդ դո՞ւ ես, որդի:
- Ես եմ, պապի: Այդ ի՞նչ ես անում:
- Պտտում եմ, անիվն եմ պտտում:
- Ինչ մեծ անիվ է:
- Մարդու բախտի անիվն է, որդի, - պատասխանում է Ծերունին:
- Իսկ ինչի՞ է ճռռում:
- Կճռռա, բա... Աշխատել, շատ է աշխատել, հալից ընկել է, որդի: Բայց դու էստեղ նայիր: - Ծերունին թափով պտտեցնում է հսկա անիվը: - Տե՛ս, ոնց են կայծերը խուրձ-խուրձ թռչում չորս կողմ ու դառնում փայլուն, փայլուն աստղեր...
Տղան բերանը բաց, հիացմունքով նայում է թռչող կայծերին:
- Ուրեմն այս կայծե՞րն են աստղեր դառնում: Ինչքան էլ շատ են...
- Էդ լավ է, որ շատ են: Թող շատ լինեն կայծերը, որ երկնքում աստղերը շատ լինեն, որ ամեն մարդ իր աստղն ունենա:
- Իսկ ո՞րն է իմ աստղը, պապի:
Ծերունին դանդաղ բարձրացնում է ցուցամատը:
- Նայիր, այ էն մեծը, էն պայծառը, տեսնո՞ւմ ես:
- Տեսնում եմ:
- Դե, բռնիր:
- Ախր ձեռքս չի հասնում, է՛...
- Որ պարզես, կհասնի, - ասում է Ծերունին: Երկնքից ցած կախվող նրա հսկա ձեռքերը գրկում են Փոքրիկին ու բարձրացնում վեր, բարձր, բարձր... աստղերից էլ բարձր:
- Իջեցրու, իջեցրու, - սարսափած ճչում է տղան: Ծերունին դանդաղ ցած է իջեցնում նրան շենքերից մեկի տանիքին: Փոքրիկը զարմացած նայում է շուրջը: Դե, իհարկե, իրենց շենքի տանիքն է: Իսկ ցածում փռվել է գիշերային քաղաքը՝ էլեկտրական լույսերով ողողված:
Տղան նորից թռչկոտում է տանիքի վրայով, թավալ տալիս:
Լսվում են ղողանջող զարկեր: Ասես մեկը երկաթե հսկա ձողով հարվածներ է տեղում լուսնի արծաթե սկավառակին:
- Դի՛նգ-դա՛նգ... Դի՛նգ-դա՛նգ...
- Էս ի՞նչ է, - զարմացած ձայն է տալիս Ծերունին:
- Քաղաքի հրապարակի մեծ ժամացույցն է, պապի, - պատասխանում է տղան:
- Կարծեմ տասներկու անգամ զարկեց:
- Ըհը, տասներկու անգամ:
- Ուրեմն ժամանակն է, - անհանգիստ ասում է նա: - Մարդկանց երազներ բաժանելու ժամանակն է արդեն:
Ծերունին բարձրացնում է ամպանման հոնքերը, և նրա հուժկու ձայնն արձագանքում է աստղոտ, կապույտ երկնքում:
- Արթնացեք, բարի թզուկներ, արթնացե՛ք... Քնել է աշխարհը, քնել են մարդիկ, երազներ բաժանելու ժամանակն է, արթնացեք...
Եվ ահա, շենքի աղյուսաշար ծխնելույզներից փնչալով ու փռշտալով, դուրս են ցցվում թզուկների գլուխները: Փոքրիկը նրանց տեսնելուն պես հրճվալից առաջ է նետվում:
- Բարի թզուկներ...

- Օ՛, դո՞ւ էլ ես այստեղ, Փոքրիկ, - հարցնում է Դեղնամորուքը:
- Բայց այս ժամին դու պետք է քնած լինեիր, - ասում է Կարմրաքիթը և բերանն աստիճանաբար բանալով, փռշտում է այնպես ուժգին, որ քիչ է մնում ծխնելույզի անցքով նորից ցած գլորվի:
Ծերունին, որ մինչ այդ ձեռքը ճակատին դրած նայում էր քնած աշխարհին, շրջվում է ու որոտընդոստ ձայնով դիմում նրանց.
- Շուտ արեք: Գիշերն անցնում է, իսկ դուք մարդկանց երազներ դեռ չեք բաժանել:
Թզուկներն իրար են անցնում:
- Դե, մենք գնացինք, Փոքրիկ, - ասում է մեկը:
- Բարի գիշեր, - ձեռքը թափահարելով հրաժեշտ է տալիս մյուսը:
- Դիլլի, Բոբի, Բոբ, իմ ետևից, եղբայրներ, - կանչում է երրորդը:
- Սպասեք, բարի թզուկներ, սպասեք, - ճչում է տղան:
Թզուկները զարմացած կանգ են առնում:
- Մեր բակում, - ասում է նա, - մի տղա է ապրում ու ճակատի մազերը կարճ կտրած մի աղջիկ: Այդ տղան մի կիթառ ունի ու մի հին, փչացած մոտոցիկլետ: Ինչ կլինի, բարի թզուկներ, այնպես արեք, որ նրա մոտոցիկլետը շուտ աշխատի, որ ճակատի մազերը կարճ կլորած աղջկան նստեցնի ետևը, ու գնան հեռո՛ւ, հեռո՛ւ...
Թզուկները հարցական նայում են իրար, ինչ-որ բան են ծվծվում, ապա դառնում տղային:
- Շատ բարի, Փոքրիկ, - ասում է Դեղնամորուքը: - Մենք այս գիշեր մի նոր, սքանչելի մոտոցիկլետ կուղարկենք այդ տղային:
- Սայլակավոր մոտոցիկլետ, - լրացնում է Կարմրաքիթը:
- Հետո ուզում եմ, - շարունակում է Փոքրիկը, - որ փոստատար քեռին երկրորդ հարկում ապրող տատիկին տեսնելիս էլ չփախչի և ուրախ լուր բերի նրա տղայից...
Թզուկները դարձյալ նայում են միմյանց և էլի հավանության նշան անելով, դիմում տղային:
- Թող քո ուզածը լինի, Փոքրիկ, - ասում է մեկը: - Թող բոլոր մայրերն էլ ուրախ լուր ստանան իրենց որդիներից:
- Էլ ուրիշ ի՞նչ ես ուզում, ասա, - հարցնում է երկրորդը:
- Շտապիր, մեզ քիչ ժամանակ է մնացել, - ավելացնում է երրորդը:
Եվ ահա տղան խնդրում, աղերսում է իր բարի թզուկներին, որ երրորդ հարկում ապրող քեռու խաղողի վազերը շուտ մեծանան, երրորդ հարկ հասնեն, որ նա էլ ուտի իր ձեռքով աճեցրած խաղողը: Որ հինգերորդ հարկի ձեռնափայտով պապիկն ու նրա կինը ներքևի հարկում ապրեն, որ էլ չտնքան աստիճաններ բարձրանալիս: Եվ գրող քեռին, որ ամենալավ բաներն է ցույց տալիս սավանի վրա, տեսնի իր գրածներից մեկնումեկն իսկական կինո դարձած:
- Լսեցի՞ք, բարի թզուկներ, - երկնքից ձայնում է Ծերունին:
- Լսեցինք...
- Դե, ուրեմն շուտ արեք... Մարդիկ սպասում են, մարդիկ երազում են, թող աշխարհում ոչ մի բարի երազանք անկատար չմնա, շտապեք... - բացականչում է նա ու թափով պտտեցնում հսկա անիվը:
Անիվից գունավոր կլայծեր են դուրս թռչում՝ գունավոր, սքանչելի երազներ: Թզուկները, ձեռքերն առաջ մեկնած, հերթով հավաքում են երկնքից թափվող կայծերը և արագ անհետանում աղյուսաշար ծխնելույզների մեջ:
... Փոքրիկն ուրախ վազվզում է բակում, շուրջը լույս է, երաժշտություն, բայց ահա... նա միանգամից քարանում է:
Առանձնատան երկաթե դարպասի մոտ կանգնել է կիթառ նվազող տղան՝ մեջքը ցանկապատին հենած, ձեռքերը գրպանում, գլխահակ ու տխուր: Քիչ հեռու ընկած է նրա

ավերվածի մոտոցիկլետը, ճակատի մազերը կարճ կտրած աղջիկը ծնկել է բակի մեջտեղում, եռանդով քանդում է մոտոցիկլետի մասերն ու բաժանում հավաքված երեխաներին: Իսկ նրանք շատ են, շատ, մոտոցիկլետի մասերի չափ շատ:
- Սա ի՞նչ է, - այլայլված առաջ է նետվում Փոքրիկը:
- Ես էլ երբեք չպետք է լսեմ իմ մոտոցիկլետի ձայնը, - տխուր ասում է տղան:
Փոքրիկը դիմում է աղջկան:
- Ի՞նչ ես անում:
- Լավ եմ անում, - վրդովված վրա է տալիս աղջիկը: - Նա շարունակ սրանով էր զբաղված: Նա ինձ բոլորովին մոռացել էր:
- Ախր այդ մոտոցիկլետը նա քեզ համար էր պատրաստում:
- Այո, - ասում է կիթառ նվագող տղան: - Ես երազում էի այն օրը, երբ մոտոցիկլետը կաշխատի, նրան կնստեցնեմ իմ ետևում ու մենք միասին կգնանք հեռո՛ւ, հեռո՛ւ: Իսկ հիմա...
- Հիմա ոտքով կգնանք, - ասում է աղջիկը՝ մասերը քանդելով: - Ոտքով ավելի լավ է: Ոտքով ամեն տեղ կարելի է գնալ:
... Ահա երեխաները, մրջյունների պես քարշ տալով, տանում են նահատակված մոտոցիկլետը: Իսկ կիթառ նվագող տղան փշրված հայացքով կանգնել է մի անկյունում ու ոտքով խաղում է առջևն ըն-կած փոքրիկ քարի հետ:
... Ահա տնքալով ու փնչալով գալիս են հինգերորդ հարկի ձեռնափայտով ծերուկն ու նրա կինը: Նրանք հրելով ու քաշքշելով՝ մի գեղեցիկ, սայլակավոր մոտոցիկլետ են բերում: Ծերուկն իր ձեռնափայտի կեռով կառչել է ղեկից ու քրտինքի մեջ կորած քաշում է: Ոտքերը դողում են, գլուխը պտտվում... Իսկ կինը սայլակից կպած ամբողջ ուժով հրում է ու փնթփնթում.
- Քաշիր, ինչ ես կրիայի պես գնում:
- Մի հարցնող լինի. - ճակատի քրտինքը մաքրելով՝ Փոքրիկին է դիմում ծերունին, - մեր ինչի՞ն էր պետք մոտոցիկլետը: Ամբողջ քաղաքը մեզ վրա է ծիծաղում: Ավելի լավ չէ՞ր սրա փոխարեն զումարը վերցնեինք:
- Գումար, գումար... - եռանդով վրա է տալիս կինը: - Գումարով, սիրելիս, հեռու չես գնա: Մենք հալից ընկած մարդիկ ենք, մեզ մոտոռ է հարկավոր:
- Ի՞նչ ես ասում, տատի, սա ձերը չի: Ես այս մոտոցիկլետը նրանց համար... Սա ձերը չի...
- Ոչ, մերն է: Վիճակախաղի տոմսով ենք շահել, սերիան 681447, համարը՝ 45:
- Ճիշտ չի, ճիշտ չի... Պապիկը ինչպե՞ս կարող է մոտոցիկլետ քշել:
- Կսովորի...
- Ի՞նչ, - հանկարծակիի եկած ցնցվում է ծերունին:
- Այո, զարմանալու ոչինչ չկա, կսովորես: Վարորդական կուրսեր կգնաս ու կսովորես...
- Վարորդական կուրսե՞ր, - կնոջն է դիմում փշաքաղված ծերունին: - Այս տարիքո՞ւմ... Խենթացե՞լ ես, ինչ է: Դու ինձ ուզում ես աշխարհով մեկ ծաղրուծանակ անել...
Փոքրիկն այս ամենից ոչինչ չի կարողանում հասկանալ: Ի՞նչ է կատարվում: Չէ՞ որ նա խնդրեց հր բարի թզուկներին, և նրանք խոստացան, բայց հիմա...
...Ահա բակում ոռնում է քամին: Շխկշխկոցով բացուխուփ է անում պատուհանների փեղկերը: Երկինքը որոտում է: Լսվում են ջարդվող, ցած թափվող ապակու ձայներ... Ինչ-որ գրված էջեր քամու բերանն ընկած ցիրուցան են լինում բակով մեկ: Ձեռնափայտով ծերուկը վերցնում է նրանցից մեկը ու ակնոցն ուղղելով, մոտեցնում աչքերին:
- Սա ի՞նչ է, - զարմացած հարցնում է նա: - Այստեղ հրաշալի մտքեր կան գրված:
- Դրանք գրող քեռու գրվածքներն են, պապի, - տագնապով ասում է Փոքրիկը՝ թղթերը գետնից հավաքելով:

...Ահա բակում դեսուդեն է վազում գրող քեռին: Նա ուզում է հավաքել իր ձեռագրերը:
- Օգնեցե՛ք, - բղավում է նա, - տարա՛վ... Քամին տարա՛վ իմ անքուն գիշերների տառապանքը:
Ահա հեռվից, բակում շաղ եկած թերթերը հավաքելով գալիս է խաղողի վազեր աճեցնող հարևանը: Իսկ հակառակ կողմից՝ առանձնատան տերը:
- Փախե՛ք, - ձայն է տալիս Փոքրիկը տղային ու աղջկան: - Փախեք, ճյուղ կտրող քեռին...
- Հայրիկս, - տագնապով բացականչում է աղջիկը ու գլխապատառ վազում տուն:
- Սպասիր, - նրա ետևից կանչում է տղան: - Բա դու ասում էիր քարանձավով լիճը գնանք:
- Լսեք, երիտասարդ, եթե մեկ էլ ձեզ տեսնեմ իմ աղջկա հետ, այն ժամանակ արդեն երկուսիդ էլ ուղղակի սղոցով... - զսպված զայրույթով ասում է նա ու գնում՝ գետնին թափված թղթերը տրորելով:
- Ի՞նչ ես անում, ա՛յ մարդ, - վրդովված բղավում է վազեր աճեցնող հարևանը: - Ո՞ւր ես տրորում: Չէ՞ որ ոտքերիդ տակ անքուն գիշերների աշխատանք կա թափված:
- Ո՞ւր է, - զարմացած ասում է առանձնատան տերը: - Ես ոչինչ չեմ տեսնում:
- Չի տեսնում: Նա ոչինչ չի տեսնում: Իրենից բացի նա ոչինչ չի տեսնում:
Իսկ այնտեղ, բակի մի անկյունում, գլուխը ափերի մեջ՝ առած, նստել է գրող քեռին:
- Պետք չեկան, - տանջալից կրկնում է նա: - Ոչ ոքի պետք չեկան իմ գրվածքները:
Փոքրիկը վազում է դեպի գրողը ու ձեռքի թղթերը մեկնում նրան:
- Ինչի՞ այսպես եղավ, քեռի... Ախր, ես ուզում էի...
Փոքրիկի ձայնը խեղդվում է կոկորդում: Ցանկապատված բակից ինչ-որ աղմուկ է լսվում: Ահա երկաթե դարպասի փակ դռնակը մի քանի անգամ անզոր ցնցվում է: Լսվում է ճակատի մազերը կարճ կտրած աղջկա լացը:
- Հասեք, - օգնության է կանչում Փոքրիկը: - Հասե՛ք, ճյուղ կտրող քեռին ծեծում է նրան...
Բայց այ քեզ հրաշք... ճեղքվում է առանձնատունը շրջափակող քարե ցանկապատը, և ճեղքվուսծքից, ոտաբոբիկ, մազերը խռիվ, դուրս է թռչում ճակատի մազերը կարճ կտրած աղջիկն ու հեկեկալով նետվում դեպի տղան:
- Փախչենք, - ահաբեկված ու զայրույթով բղլսվում է նա: - Գնանք... Գնանք հեռու... Հեռու այս փշալարերից, այս սուր-սուր ապակիներով ցանկապատից, այս բանտից...
Բայց ահա ցանկապատի ճեղքում հայտնվում է առանձնատան տերը՝ սղոցը ձեռքին: Պատը սեղմվում է և նա կեսը դուրս, կեսը՝ ներս բղավում է սղոցը թափահարելով:
- Ետ դարձիր, քեզ ասում եմ... Կկտրեմ, կանաչ-կանաչ կկտրեմ...
- Գնանք, - ասում է աղջիկը տղային: - Քարանձավով լիճը գնանք:
Բայց ահա աղմուկով բացվում է երկաթե դարպասը, դուրս է թռչում առանձնատան տերը և սղոցը ձեռքին՝ կատաղած հարձակվում է տղայի ու աղջկա վրա:
- Կկտրե՛մ...
- Կտրե՛ց, կտրե՛ց... - սարսափահար բղավում է Փոքրիկը;
- Չեմ թողնի, - զայրալից որոտում է խաղողի վազեր աճեցնող հարևանը՝ բռնելով առանձնատան տիրոջ օձիքից: - Չեմ թողնի, որ կտրես... Էս մի թիզ հողում էլ նրանք պետք է աճեն ու զորանան...
Իսկ այնտեղ, շենքի շքամուտքի մոտ դեռ կանգնած վիճում են ձեռնափայտով ծերուկն ու նրա կինը:
- Հասկացիր, - կրկնում է ծերունին, - ուժ չկա: Ես իմ ձեռնափայտն էլ հազիվ եմ ինձ հետ տանում:
- Քո կարծիքով այս մոտոցիկլետը պետք է բակո՞ւմ թողնենք, - ասում է կինը:
- Իսկ ինչ է, այս ահռելի ծանրությունն աստիճաններով հինգերորդ հա՞րկ պետք է հասցնենք:

- Այո, մինչև բակում մի հարմար ապաստարան կառուցենք:
- Տեր իմ Աստված, - տրտնջում է ծերունին: - Իբր մենք շատ էինք կարողանում մեզ հինգերորդ հարկ հասցնել, սա էլ պոչներիցս կապեցինք:
- Շատ մի փնթփնթա, քաշի՛ր:
- Չեմ կարող, այլևս ոչ մի քայլ չեմ կարող: Կընկնեմ այստեղ ու կմեռնեմ:
- Նայիր... - Փոքրիկին է դիմում խաղողի վազեր աճեցնող հարևանը: - Տնկեցի, խնամեցի, որ աճի, բերք տա... Որ բոլորն ուտեն իմ աճեցրած խաղողից, բայց տես, թե ինչ ստացվեց:
Փոքրիկը բարձրացնում է գլուխը, նայում խաղողաշատ վազերին, որոնք շենքի պատշգամբներով բարձրանալու փոխարեն թեքվել, լարերի վրայով գնացել են առանձնատան տիրոջ այգին:
Ահա այգու ցանկապատի գլխին կանգնել է առանձնատան տերը և շրթունքները ծպպացնելով ուտում է քաղցր խաղողը:
- Ի՞նչ ես անում, - ձայն է տալիս Փոքրիկը, - հո մենակ քոնը չի, բոլորինս է:
- Իմն է, - պատասխանում է առանձնատան տերը, - միայն իմը... Մի մոռացեք, որ ձեր շենքը իմ հողամասում է կառուցվել:
- Ոչինչ, ես էլի կտնկեմ, էլի կաճեցնեմ, և բոլորը կուտեն իմ աճեցրած խաղողը...
- Գրեցի, - տրորված էջերը թափահարելով ասում է գրողը - անքուն գիշերներով գրեցի, որ մարդիկ կարդան, որ մարդիկ սիրեն, խնամեն, փայփայեն իրար, բայց տես, թե ինչ ստացվեց...
Փոքրիկը, որ այս ամբողջ խառնաշփոթի ժամանակ մերթ վազում էր մեկի մոտ, մերթ էլ մյուսի, ցնցված փակում է ականջները և «բարի թզուկներ» կանչելով, փախչում բակից:
... Ահա դարձյալ շենքի տանիքն է: Ահա տագնապով ու սոսկահար, լացն ատամների տակ սեղմած, հրշեջ պատուհանից տանիք է ելնում տղան: Շուրջը դարձյալ գիշեր է, երկինք ու աստղեր: Ցածից շարունակում է լսվել մարդկանց աղմուկն ու աղաղակը: Իսկ աստղերի մեջ դարձյալ իր անիվն է պտտում ճերմակամորուք Ծերունին:
- Է-հե-հե-հե՛յ... - ձայն է տալիս Փոքրիկը:
Ծերունին ընդհատում է պտտելը ու ակնոցի վերից նայում ցած:
- Ի՞նչ կա, որդի, ի՞նչ է պատահել...
- Ես խնդրեցի իմ բարի թզուկներին, բայց նրանք տես թե ինչ են արել:
Ծերունին նայում է ցած, խոժոռում դեմքը:
... Ահա Փոքրիկը թափահարում է ձեռքերը ու վըզզ, սլանում դեպի երկինք: Երկնքում ծլնգոցով նվագում են աստղերը: Իսկ ցածում երկիրն է՝ մեծ ու կլոր: Հայրիկը ճիշտ էր ասում, որ երկիրը կլոր է՝ փուչիկի պես, միայն մեծ, շատ մեծ: Ահա կախվել է երկնքից ու ճոճվում է... Չէ, չի ճոճվում, պտտվում է: Պտտվում է ու ճռռում, պտրտվում է ու ճռռում, և այդ ճռռոցից ասես ցնցվում են աստղերը: Որքան տղան բարձրանում է վեր, երկիրն այնքան փոքրանում է ու փոքրանում, դառնում ճիշտ և ճիշտ իր փուչիկի չափ: Ահա և վերջապես հասնում է Ծերունին:
- Ինչ լավ է այստեղ, - հրճվալից բացականչում է նա, - ինչ գունավոր է երկրագունդը, պապի: Այդ ի՞նչ կապույտներ են նրա վրա...
- Դրանք գետերն են, որդի, ծովերն ու օվկիանոսները:
- Իսկ կանա՞չը, դեղի՞նը...
- Դրանք անտառներն են, ծառուծաղկունքը, լեռները, ցորենի հասած արտերը: Դա կյանքն է, որդի, կյանքը...
- Եվ բոլորը գտնվում է այդ մեծ փուչիկի վրա՞:
- Այո, էդ մեծ փուչիկի վրա: Բայց սպասիր, ի՞նչ է կատարվում էնտեղ:
Փոքրիկն ուշադիր նայում է ու զարմացած թարթում աչքերը:

Ահա ինչ-որ չարագույժ հռնդյուն է լսվում, թմբուկների դղրդյո՞ւն է դա, թե՞ քայլող զինվորների ոտնաձայն:
... Ահա իրենց բակը: Բայց այս ի՞նչ է. այնտեղ ոչ ոք չկա:
... Ահա դատարկ, ամայացած բակով ծանրորեն քայլում է փոստատարը՝ ուսին սև թղթի մի հսկա կծիկ դրած: Ահռելի ծանրության տակ կքած, նա տնքում, մաքրում է ճակատի քրտինքը և, ոտքերը հազիվ փոխելով, քայլում առաջ:
- Բարբարոսներ... - տնքալով հառաչում է նա: - Այս ի՞նչ եք անում:
- Քեռի փոստատար... Քեռի փոստատար, - երկնքից ձայն է տալիս Փոքրիկը:
Փոստատարը կանգնում, նայում է վեր:
- Ա՛, այդ դո՞ւ ես, Փոքրիկ:
- Ես եմ... Ետ դարձիր, քեռի փոստատար, գալիս է...
- Ո՞վ է գալիս:
- Երկրորդ հարկում ապրող տատիկը: Նա, որ քեզնից բարի լուր է ուզում իր տղայի մասին: Տես, գալիս է...
... Ահա բակի խորքից գալիս է որդեկորույս մայրը: Գալիս է այնպես հանդարտ ու պատկառելի, որ ասես քայլող արձան լինի: Փոստատարը հսկա կծիկից պոկում է սև թղթի մի կտոր ու լուռ մեկնում կնոջը: Կինը հանկարծակիի եկած ցնցվում է, պատռում է թուղթն ու դեն շպրտում:
- Ո՛չ, ո՛չ, նա ողջ է... նա կգա,., նա պիտի զա...
- Բարբարոսնե՛ր, գազաննե՛ր... - կրկնում է փոստատարն ու առաջ գնում:
- Ետ դարձի՛ր, - սարսափած բղավում է Փոքրիկը: - Բավական է, ետ դարձի՛ր...
... Ահա բակում հայտնվում են իրենց շենքի բնակիչները: Փոստատարը ձեռնոց հագած իր պրոտեզե ձեռքով հսկա կծիկից պոկում է մի-մի սև թղթի կտոր ու տալիս նրանց: Բոլորը սարսափած, բայց անձայն ճչում են: Իսկ որդեկորույս մայրը մոտենում, բոլորի ձեռքից հավաքում է սև թղթերը, պատռում է ու զայրալից բղավում.
- Չեմ հավատում: Նրանք բոլորն էլ ողջ են: Բոլոր որդիներն էլ ողջ են: Աշխարհում ոչ մի որդի չի մեռնում...
- Ետ դարձիր, քեռի փոստատար, - դարձյալ աղերսում է տղան:
- Չեմ կարող: Ես դեռ շատ պիտի բաժանեմ սրանից:
- Դա ի՛նչ է:
- Սև թուղթ...
- Սև թուղթն ի՞նչ է:
- Լավ է. որ չգիտես:
- Չէ, գիտեմ: Դա շատ վատ բան է, գիտեմ... Մի տար, մի տար, - թախանձագին ու սոսկահար կրկնում է Փոքրիկը:
- Չեմ կարող: Նրանք ուզում են, որ բոլորին էլ բաժին հասնի... Տես, նորից խաղում են քո փուչիկի հետ, - ասում է փոստատարը և ինչ-որ բան ցույց տալով, հեռանում: Եվ ճիշտ որ...
Հսկա փուչիկը թռչում է մեկ այս, մեկ այն կողմ: Ահա ինչ-որ ձեռքեր խաղում են փուչիկի հետ: Չէ, չեն խաղում, ամեն մեկը փորձում է բռնել:
- Տես, պապի, - Ծերունուն է դիմում Փոքրիկը: - Մեծ-մեծ քեռիներ են, բայց խաղում են փուչիկի հետ: Էհե՛յ, ի՞նչ եք անում, կպայթի...
- Էհե՛յ, որտե՞ղ եք դուք, բարի թզուկներ, - իր հուժկու ձայնով որոտում է Ծերունին:
... Ահա իրենց շենքի տանիքի աղյուսաշար ծխնելույզներից դուրս են ցցվում թզուկների գլուխները, շփոթված, այլայլված կերպարանքներով:
- Այստեղ ենք:

- Մենք կանք...
- Մենք եկանք, - ծվծվում են նրանք:
- Ի՞նչ է կատարվում էդտեղ, - հարցնում է Ծերունին: - Ինչո՞ւ եք խառնել մարդկանց երազները: Ո՞ւմ ձեռքին եք թողել երեխայի փուչիկը:
- Սխալվել ենք:
- Շփոթել ենք:
- Ամեն ինչ խառնել ենք իրար:
- Բոլորն այդ հարբուխից է, - փնթփնթում է Դեղնամորուքը: - Ախր, ասում էի, չէ, որ գլխներիս մի փորձանք կբերի: Կարմրաքիթը վարակեց, Կարմրաքիթը:
- Դեղնամորուքը ճիշտ է ասում, ինչ-որ պտուտակներ են խառնվել այստեղ... - ճլթացնելով իր ճաղատին, հաստատում է Կանաչամորուքը:
- Ես վարակեցի, այդ նրանից է, որ իմ քիթը կարմիր է ներկած, - տխուր հաստատում է Կարմրաքիթը: - Ես վարակեցի:
- Սխալվել ենք... - միաբերան հառաչում են թզուկները:
- Իսկ դուք հասկանո՞ւմ եք, թե ինչ կարող է լինել էդ սխալից, - զայրալից մռնչում է Ծերունին: - Ուղղեցեք սխալը...
- Ուղղեցեք, բարի թզուկներ, - տագնապով կրկնում է տղան, - շուտ արեք, ուղղեցեք, հիմա կպայթի:
Ահռելի դղրդյունն ավելի է ուժգնանում: Որպես ազդանշան՝ տանիքի, երկնքի ու աշխարհի վրա շարունակ վառվում, մարում է կարմիր լույսը: Տղան երկու ձեռքով փակում է ականջները:
- Մի՛ վախեցիր, Փոքրիկ, - տանիքի վրայից ձայն են տալիս թզուկները: - Մի վախեցիր, չի պայթի: Մենք հիմա...
- Չէ, կպայթի, կպայթի... - սարսափած կրկնում է տղան: - Տեսեք, նրանց բերաններին ծխախոտներ կան:
Եվ հանկարծ հսկա փուչիկը դիպչում է նրանց վառված ծխախոտներից մեկին ու ահռելի դղրդյունով պայթում: Այնպիսի դղրդյունով, որ կարծես տակնուվրա են լինում երկինքն ու աստղերը:

6

- Պայթեց, պայթեց, - ճչաց տղան քնի մեջ ու վեր թռավ:
- Չի պայթել, հանգստացիր, փուչիկդ այստեղ է, - ասաց պատշգամբում կանգնած հայրը՝ ճաղին կապված փուչիկը ցույց տալով:
Փոքրիկը ծնկեց անկողնու մեջ, ցրված հայացքով նայեց շուրջը:
Լույսը վաղուց բացվել է: Երկինքը ողողվել է պայծառ արևով: Ոչ մի պայթյուն, ոչ մի դղրդյուն... Նա պարզապես քնի մեջ լսել էր կիթառ նվազող տղայի մոտոցիկլետի ձայնը: Մոտոցիկլետը բակում կանգնած եռանդով հռնդում էր: Փոքրիկը ցած թռավ անկողնուց ու ձեռքերը թափահարելով ուրախ բացականչեց.
- Աշխատում է... Մոտոցիկլետն աշխատում է...
Տղան վերջապես աշխատանքի էր գցել իր մոտոցիկլետը և ուրախ ժպիտը դեմքին սպասում էր ճակատի մազերը կարճ կտրած աղջկան: Ահա և նա... Ծիծաղելով դուրս թռավ երկաթե դարպասից, նստեց մոտոցիկլետի ետևում: Ղեկը բռնած տղան հանկարծ նկատեց պատշգամբից նայող Փոքրիկին ու ձայն տվեց.
- Հե՛յ, մեծ մարդ, արի, գնում ենք...
- Քարանձավով լիճն ենք գնում, - ավելացրեց աղջիկը. - Արի, դու էլ մեզ հետ արի...

Փոքրիկը հարցական նայեց հորը և նրա լուռ համաձայնությունը ստանալով, անհամբեր բակ թռավ: Նա արագ տեղավորվեց տղայի ու աղջկա մեջտեղում և ուրախ ժպիտը դեմքին, ձեռքը թափահարելով հրաժեշտ տվեց հորը:
Մոտոցիկլետն ուժգին հռնդաց ու պոկվեց տեղից: Եվ ահա սլանում են նրանք քաղաքի մեծ ու լայն փողոցներով: Փոքրիկն ուրախ է, ժպտում է: Քաղաքն ասես ողողվել է նրա սքանչելի, նրա պայծառ, նրա արևոտ ժպիտով:
1965 թ.
Երևան